№ 212 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 212

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

սրանով յայտնում է իր գիտութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, սեպտ. 28-ին, առ. ժամը 11½-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապ., № 7)

ՆՇԱՆԱԿՎԱԾ է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգի խնդիրներն են.
1) Ընտրութիւն Ընկերութեան նոր անդամների։
2) Խորհրդի զեկուցումը միջնորդ դատարանի որոշման մասին և դրա հետ կապված խորհրդի անդամների ընտրութիւն։
3) Ընտրութիւն մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 7 անդամի և 3 փոխանդամի։
4) Ընթացիկ հարցեր։ առ. (կ.) 896. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օգնական. Մոսկվայի համալսարանի և ասպետական Բիլլինի համալսարանի պրոֆ. Պօղնէբի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, «ինֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ, Բոլշէվիկովսկայա փող. սեպ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆօն 10—58.
(չ. ու. կ.) առ. 875. 50—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. Գ. ԿԷՕՆՋԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առա. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։
առ. (ա. օ.) 804. 0—21

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ առ. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7։
Վելիամինովսկայա փող. № 4.
(ա. օ.) առ. 871. 0—8

ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Թագաւոր Կայսրի մեկնումը սեպտեմբերի 20-ին պատերազմական գործողութիւնների դաշտը և ռուսական զօրքերի տարած նոր փառաւոր յաղթութիւնը գերմանացիների վրա Աւգուստեան ճակատամարտում — ահա օրվայ գլխաւոր դէպքերը։

Թագաւոր Կայսրի՝ իբրև համառուսական ամբողջ զօրքի Գլխաւոր Պետի ներկայութիւնը գործող զօրաբանակում, անտարակոյս, նոր ոգեորութիւն և եռանդ պէտք է ներշնչէ մեր քաջարի զօրքերին։

Պէտք է ասել, որ Գերմիշլի պաշարմամբ պատերազմական գործողութիւնները ռուս-աւստրիական թատերաբեմի վրա փոխադրված լինելով Ռուսական Գալիցիա, Աւստրիայի հետ ունեցած մեր պատերազմի առաջին շրջանը, մի փառաւոր շրջան, պէտք է վերջացած համարել։ Այժմ ամբողջ Ռուսական Գալիցիան, որի գլխաւոր քաղաքն է Իլվովը կամ Լէմբերգը, մեր ձեռքումն է. այժմ ռուսական զօրքը ձգտում է նուաճել և Արևմտեան Գալիցիան, որի գլխաւոր քաղաքն է Կրակովը։ Երբ այդ պլանն ևս իրագործվի — և համոզված ենք որ կիրագործվի, չը նայելով որ Կրակովի մօտ կենտրոնացել են աւստրիական և գերմանական բազմաթիւ զօրքեր—այն ժամանակ ռուս-աւստրիական պատերազմը կարելի է վերջացած համարել, և ամբողջ Աւստրո-Ունգարիան խոնարհած կը լինի Ռուսաստանի առաջ։

Օրվայ մի ուրիշ կարևոր դէպքը, Թիւրքիայի որոշումն է՝ փակել Դարդանէլը բոլոր պետութիւնների նաւերի առաջ։ Իբրև արդարացումն, Թիւրքայ կառավարութիւնը պատրուակ է բերում, որ նա ստիպված է դիմել այդ միջոցին, քանի որ անգլո-ֆրանսիական նաւատորմը երթևեկում է Դարդանէլի առաջ։

Այդ պատրուակն անհիմն է, ի հարկէ, որովհետև անգլո-ֆրանսիական նաւատորմը ստիպված է երթևեկել Դարդանէլի նեղուցի առաջ, որպէսզի թոյլ չը տայ «Գոբէն» և «Բրեսլաու» գերմանական դրէդնօուտներին դուրս գալ և մտնել Միջերկրական ծովը։ Ամենքին քաջ յայտնի է, որ Թիւրքայ կառավարութիւնը թոյլ կը տար այդ երկու նաւերին մտնել Միջերկրական ծովը, եթէ չը լինեը անգլո-ֆրանսիական նաւատորմը, իսկ այդ երկու դրէդնօուտները թէև համարվում են թիւրքական, բայց իրողապէս նրանք գերմանական են։

Թիւրքայ կառավարութեան այդ որոշմամբ՝ Կովկասը և Հարաւային Ռուսաստանը զրկվում են այդ միակ ծովային ճանապարհից, որով նրանք հաղորդակցում էին աշխարհի հետ։

Անշուշտ, Թիւրքայ կառավարութեան դրդողը՝ անել այդ քայլը՝ Գերմանիան է, որ այժմ իր ձեռքն է ձգել իրական իշխանութիւնը Կ. Պոլսում և խաղում է Թիւրքիայի հետ, ինչպէս կամենում է։

Սակայն, ինչպէս տեսնում ենք ռուսական կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնից, մեծ պետութիւնները նախազգուշացրել են Թիւրքիային, որ եթէ այդ որոշումը ժամանակաւոր չէ, նրանք միջոցներ ձեռք կառնեն, և տուժողն ի հարկէ Թիւրքիան կը լինի։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—(Պաշտօնական)։ Գեներալ Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Արևելա-պրուսական զօրաճակատում գերմանացիների նահանջը շարունակվում է։ Գերմանացիք փորձում են Ֆալ իրանց ամրացրած դիրքերում Վերժբոլովից մինչև Լիկ ընկած սահմանի մօտ։ Մինչև սեպտեմբերի 20-ը մեր զօրքերը գերել են աւելի քան 1000 գերմանացու։ Վերցրել են նաև մի քանի թնդանօթ, արկղներ ռազմամթերք վ լի, աւտոմոբիլներ և մօտոցիկլէտներ։ Սեպտ. 20-ին և 21-ին վերցված պատերազմական աւարը դեռ պարզված չէ»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
22—23 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Երեկ հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Զախ զօրաթեւում կռիւը շարունակվում է ամբողջ թափով Արրայի շրջանում։ Սակայն այստեղ դեռ օրոշ աջողութիւն ձեռք չէ բերված։ Անկը և Սօմա հովիտների վերին մասի և Սօմայ ու Ուազ գետերի միջև կռիւները կրում էին աւելի նուազ յամառ բնոյթ։ Մենք առաջացել ենք Սուասսոնի շրջանում, ուր գրաւել ենք Տրանբլին թշնամուց։ Համարեա մնացած ամբողջ զօրաճակատում նախկին լռութիւնը շարունակվում է։ Վէվը շրջանում մենք փոքր ինչ առաջ ենք դնացել Ապրէնի և Մասսի միջև Բիւլտենդէմանի ուղղութեամբ»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Էն գետի մօտ կռիւը շարունակվում է ահա 24-րդ օրն է։ Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ գերմանացիք շարունակում են յամառ յարձակումներ գործել ձախ զօրաթեւի վրա, մանաւանդ Ռուա շրջանում։ Սակայն գերմանական բոլոր յարձակումները ետ են մղված, չը նայած որ գերմանացիք ստացան օգնութիւն կենտրօնից։ Բէյմսի կենտրօնում և մինչև Արգօնները գրութիւնն անփոփոխ է։ Կրօնպրինցի զօրքը, որ փորձում էր ներս մտնել Արգօնի անտառով, վանվեց Վարէն տանող ճանապարհից դէպի հիւսիս՝ Վիէն-Լէվիլլէի ուղղութեամբ։ Դաշնակիցները դանդաղ, բայց ամուր աջողութեամբ ամրանում են Մասսի մօտի բարձունքներում։

Գերմանացիք եռանդով ամրակոծեցին Անավերպէն բերդի հարաւ-արևելեան զօրաճակատը, բայց ոչ մի աջողութեան չը հասան։ Վերջին ժամանակ գերմանական արտիլէրիան թուլացել է։ Բէլգիական զօրքի գրաւած դիրքը Նէտտում չափազանց ամուր է։ Բէլգիացիք այստեղ ցոյց են տալիս ամենախիզախ դիմադրութիւն։

Գերմանական զօրքի մէջ ընդունվում են ոչ միայն զգեստ ու սպիտակեղէն, այլև ուտելիք իբրև յոժարական նուիրաբերութիւններ։

ԲՕՐԴՕ.—Այստեղ կռիւ է մղում, որ ֆրանսիական զօրքերի ձախ զօրաթեւում արդէն երկու ամբողջ օր է տեղի է ունենում վճռական ճակատամարտ, որի վերջնական հետևանքը կարելի է սպասել այս շաբաթվայ վերջին։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «Մեր ձախ զօրաթեւում Ուազից դէպի հիւսիս շարունակվում է կռիւը, որ չափազանց յամառ է ու տաք։ Վճռի հետևանքը մնում է չը լուծված։ Մենք ստիպված էինք մի քանի կէտերում նահանջել։ Մնացած զօրաճակատում դրութիւնը նոյնն է»։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 սեպտեմբերի

ՆԻՇ.—Սերբ-չերնոգօրական զօրքերը սեպտեմբերի 19-ին մօտեցան Սարաէյվի բերդերի առաջամարտ մասերին։ Լոյս սեպտ. 20-ի գիշերը թշնամու մօտիտօրները ռմբակոծեցին Շաբացը և հարեան դիրքերը։ Սեպտ. 20-ին ոչինչ էական բան տեղի չունեցաւ բոլոր զօրաճակատներում։

Բէլգրադը ահա քանի օր է չէ ռմբակոծվում։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերմանական աղբիւրից բղխող տեղեկութիւնների համաձայն, անգլո-ֆրանսիական նաւատորմը, որ գործում է Ադրիատիկում, անջատել է մի քանի ռազմանաւի, որոնք դիմել են Սուէցի վրայով՝ դէպի Հնդկական օվկիանոս։ Ադրիատիկում մնացել են այնքան ռազմանաւ, որոնք կարող են պաշարել աւստրիական նաւատորմին։

Իտալիայից տեղեկացնում են, որ ֆրանսիական նաւատորմը քանդել է Լիսսայի, Պէլազօցի և Լէզինի աւստրիական ազդանշան տուող կայարանները և մանրաղնին կերպով որսում է ամբողջ Դալմատինի ծովափում ականներ և քանդում է անթել հեռագրի կայանները։

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ.—Լոյս սեպտ. 20-ի գիշերը 350 գերմանացի յարձակում գործեցին եապօնական մի պահակադիրքի վրա, բայց ետ մղվեցին, կորցնելով 48 սպանված և 6 գերի։ Եապօնացիք կորցրին 5 սպանված և 8 վիրաւոր։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — (Պաշտօնական)։ «Ներքին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց սեպտեմբերի 21-ին ժամանել գործող զօրաբանակի մօտ»։

Պալատի մինիստր գեն.-ադիւտանտ՝
Կոմս Ֆրեդերիկս

ՊԱՐԻԶ. — Խօսելով Թագաւոր Կայսրի՝ գործող բանակը մեկնելու մասին, «Տանը» ասում է. «Կայսր Նիկոլայի ներկայութիւնը գործող զօրաբանակում առաջ կը բերէ Իտալիայում և Բալկաններում մեծ արձագանք, որովհետև այդ այցելութիւնը ցոյց է տալիս, թէ մօտենում է մեծ վճիռների րոպէն նրանց համար, որոնք տակաւին տատանվում են հանդէս գալու։ Կայսրի ներկայութիւնը կը ստիպէ նրանց յիշել, որ Աւստրիայի բաղդը անվերադառնալի կերպով նախորոշված է և որ վերջնական հաշի ժամանակ համահաւասար առատաձեռնութեամբ կը վարձատրվեն միայն այն ժողովուրդները, որոնք օգնած կը լինեն ներկայ պատերազմը օր առաջ իր վախճանին հասցնելու մէջ»։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Զինուորական մինիստրութիւնը որոշեց որոշ ժամանակով արձակել զէնքի կանչված զինուորներին, որպէսզի նրանք կարող լինեն կատարել շինական աշխատանքները։

ՍԱԼՕՆԻԿ.—Վերջին 6 ամսվայ ընթացքում անցան 350,000 յոյն փախստական Փոքր Ասիայից և Թրակիայից։

Ֆրանսիական «Վիլլէսիօտա» շոգենաւով Դէդէաղաչ մեկնեցին 218 ռուս։

Շարունակվում է ծանր թնդանօթների փոխադրութիւնը պետական սահմանի պաշտպանութեան համար։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Սեպտեմբերի 21-ին Բերլինում բացվել է պետական բանկը ընդունելու համար զինուորական փոխառութեան տուրքերը։

Գերմանական գեներալ-շտաբը հասարակութեան մէջ տարածելու թիւնը բարձրացնելու նպատակով տեղեկութիւն տարածեց, թէ Աւգուստովի մօտ իբր թէ երկօրեայ ճակատամարտից յետոյ գերմանացիք յաղթութիւն են տարել ռուսների վրա։ Այդ յաղթութեան մասին տեղեկութիւն ուղարկվեց նաև այստեղ։ Սակայն ռուսների իրական յաղթութեան մասին Պ. Հ. Գ. տեղեկացրեց սեպտ. 22-ին։ Թէև այդ տեղեկութիւնը հեռագրվեց և Բերլին, բայց հազիւ թէ հրատարակեն այնտեղ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Նիդերլանդական կառավարութիւնը տեղեկացրեց անգլիական մինիստրին, որ նաւատորմի այն պաշտօնեաները, որոնք ազատվել են բրիտանական «Աբուքիր» և «Խօզ Կրէսսի» յածանաւերից և որոնք գտնվում են ներկայումս Հոլանդիայում, այստեղ համարվում են իբրև հիւրեր և առողջանալուց յետոյ կուղարկվեն Անգլիա։

Ռուսաց զօրքերի տարած փառաւոր յաղթութեան աւիթով շատ քաղաքներում կատարվել են մաղթանքներ զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների և բազմաթիւ ազնիվների ներկայութեամբ։ Քաղաքները զարդարվել են դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառվել։ Ամենուրեք ուրախ տրամադրութիւն է։

ՎԼԱԴԻՄԻՐ.—Բերլին 817 վիրաւոր աւստրիացու։

ՏՈՒԼԱ.—Լվով ուղարկվեցին 10 հեծեալ օստիկան Գալիցիայի նուաճված շրջաններում օստիկանական ծառայութիւն կատարելու համար։

ՊԷԿԻՆ.—Եապօնացիների գործողութիւնները Շանդունում և Ցինանֆու-Կիաօ-Զաօ ճանապարհի գրաւումը ուրիշ ծառայեցին բուռն վիճաբանութիւնների պետական խորհրդի մէջ։ Որոշվեց հարցապնդել կառավարութեանը։ Եապօնիան Չինաստանի բողոքին պատասխանեց, որ Շանդունի ճանապարհի գրաւումը բացատրվում է նրանով, որ այդ պատկանում է գերմանացիներին և որ գրաւմանը համաձայնութիւն է յայտնել վաղօրօք չինական արտաքին գործերի մինիստրութիւնը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ Գործ.)
23 սեպտեմբերի

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Բացվեց բիկստագը։ Նախագահ ընտրվեց ձախակողմեան Պեդէրսէն Նիսկօպը, փոխ-նախագահներ՝ սոցիալիստ Կլաուզէնը և արմատական Կաուլլաէնը։ Լանդտագինգը պրէզիդիում է ընտրել նախկին կազմին։

ՈՒՐՄԻԱ.—Թերգէվէրից Այսէրու փախած բնակիչների գոյքը ազատելու համար Մատվանու է ուղարկված մի զօրախումբ, որ հանդիպել է կողոպիչ-քիւրդերի գիմադրութեան։ Զօրախումբը վանել է նրանց և հալածել մինչև սահմանը։ Քիւրդերը կորցրին սպանված 9 հոգի. մենք կորուստ չունենք։

ԹԷՀՐԱՆ.—Պարսից կառավարութիւնը դիմեց այսօր ռուսական միսիային մի նոտայով, որի մէջ յայտնում է, թէ Պարսկաստանը կամենում է խուսափել համաշխարհային պատերազմին մասնակից լինելու կորստաբեր հետևանքներից չէզոքութիւն յայտարարելով։ Նա խնդրում է Ռուսաստանից օգնել նրան այդ խնդրում՝ ետ կանչելով ռուս զօրքերին Ատրպատականից, որպիսի դէպքում Թիւրքաց դեսպանը, իբր թէ, երաշխաւորում է, որ Թիւրքիան կը յարգէ Պարսկաստանի չէզոքութիւնը։

«ПРАВИТЕЛЬСТ. ВѢСТНИКЪ»-ՈՒՄ ՏՊԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Այն մի շարք տեղեկութիւնները, որոնք վերջին օրերը ստացվում են Կ. Պոլսից, որոշակի վկայում են այն մասին, որ Թիւրքաց կառավարութիւնը վերջնականապէս ընկնելով գերմանացիների ազդեցութեան տակ՝ ցանկանում է ինչ էլ լինի ստեղծել մի այնպիսի դրութիւն, որ երբեակ համաձայնութեան պետութիւնները հարկադրված լինեն Թիւրքիայի նկատմամբ ծայրայեղ միջոցների դիմել։

Երբեակ համաձայնութեան Կ. Պոլսի ներկայացուցիչները, արտաքին գործերի մինիստրի տեղեկութիւնների համաձայն, մինչև այժմ աշխատում էին անգիտանալ Թիւրք կառավարութեան առանձին կարգադրութիւնները, որոնք կրում էին անպայման մարտակոչի բնոյթ, յոյս ունենալով որ խելամտութեան ձայնը վերջին ըսպէին կասի Թիւրք պետական գործիչներին, որ նրանց երբեակ համաձայնութեան վերաբերմամբ բռնած քաղաքականութիւնը կործանարար է։ Հէնց պատերազմի սկզբից Թիւրքաց կառավարութեանը հասկացնել տուին, որ Բ. Դուռը միայն լիակատար լոյալութեամբ և անխախտ չէզոքութեամբ կարող է փրկել Եւրոպական Թիւրքիան լուրջ վտանգից և շահել մեծ պետութիւնների բարեացակամ վերաբերմունքը։

Բայց և այնպէս Թիւրքաց կառավարութիւնը շարունակեց գործել զինուորական մինիստր Էնվէր-փաշայի և նրա կողմնակիցների ներշնչումով և ի ՀԱՍ երբեակ համաձայնութեան պետութիւնների։ Այդօրինակ մի շարք ապարքներ վերջ ի վերջոյ ստիպեցին Կ. Պոլսի անգլիական դեսպանին մի անգամ ևս պնդելու մեծ վեզիրին, որ Թիւրքիայի ամեն մի նոր ցոյցը ընդդէմ երբեակ համաձայնութեան պետութիւնների՝ կը պատժվի թշնամական ակտերով և նրա անխուսափելի հետևանքներով։

Այդ հանգիստ նախազգուշացմանը Թիւրքաց կառավարութիւնը պատասխանեց Դարդանէլը օտարերկրացիների նաւերի առաջ փակելու կարգադրութեամբ։ Թէև արտաքին գործերի մինիստրութեան մէջ ռուսաց դեսպանից այդ մասին պաշտօնական տեղեկութիւն չը կայ, մինչդեռ Պետրօգրադի հեռագրական գործակալութիւնը ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ յիշեալ միջոցը իրողութիւն է։ Եւ եթէ մօտ օրերս չը պարզվի, որ այդ բանը ժամանակաւոր բնոյթ է կրում և առաջ է եկել արտակարգ հանգամանքներից, այն դէպքում երբեակ համաձայնութիւնը բնականաբար այդ կընդունի որպէս իր դէմ ուղղված մարտահրաւէր։ Եւ դժուար թէ Թիւրքաց կառավարութիւնը կարողանայ համոզել Թիւրքաց հասարակաց կարծիքը, որ Թիւրքիան գտնվում էր վտանգի մէջ, և որ նախաձեռնած միջոցը արվել է պետական պաշտպանութեան նկատումներով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՋԸ

✦ Մեծ-բրիտանական ծովային մինիստրութիւնը պաշտօնապէս յայտարարում է, որ պատերազմի սկզբից մինչև սեպտեմբերի

10-ը անգլիացիք ձեռք են ձգել գերմանական 387 նաւ, մինչդեռ գերմանացիների ձեռք ձգած նաւերի թիւը 86-ից չէ անցնում։

◆ Անգլիական լրագիրների հաշուով, գերմանական զօրամասերի թիւը խաղաղ ժամանակի դիմաց ներկայումս քառապատկուել է։

◆ «Daily Teleg.»-ի Ստոկհոլմի թղթակիցը յայտնում է, որ, ըստ Վիեննայից ստացված պաշտօնական տեղեկութիւնների, մինչև սեպտեմբերի 20-ը աւստրիացիք կորցրել են պատերազմում 150,000 սպանված, 200,000 վիրաւոր, 200,000 գերի և 900 թնդանօթ, որոնք ընկել են ռուսների ձեռքը։

◆ Ամբողջ ամերիկեան մամուլը, առանց ուղղութեան խտրութեան, եռանդով յարձակվում է Վիլհելմ կայսրի վրա անուանելով նրան «ոմբաձիգ»։

◆ Հռոմից իբրև լուր հաղորդում են, որ իտալական մի քանի բանկ 800 միլիոն ֆրանկ փոխառութիւն են տուել Գերմանիային։

◆ Իտալական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ անգլիական արտաքին գործերի մինիստր սրը Էդուարդ Գրէյը ծրագրում են, որ մինիստրը սրը Էդուարդ Գրէյը ծրագրեալ կերպով մեկնել է դէպի Հռոմ։

◆ «Н. В.»-ի ասելով, Բուխարեստի լրագիրները տեղեկացնում են, թէ գերմանացի և աւստրիացի գործակալները փորձում են կաշառել բուլգարական մամուլին։ «Ակչիոնէա» թերթի խմբագրին (Տակէիոնէսկուի օրգանը) առաջարկվեց 100,000 ֆրանկ՝ յօգուտ Աւստրիայի 10 յօդուած ապելու համար։ Խմբագիրը բողոքեց դատախազին, մեղադրելով գերմանացի գործակալին՝ կաշառելու մէջ։

◆ «День»-ին հեռագրում են Բրէսլաւից, որ, տեղական հիւանդանոցների հաշուով, քաղաքում գտնվում են մօտ 250,000 վիրաւոր, որոնց բերել են արևելեան սահմանից։

◆ Ցայսմի գրող Անատոլ Ֆրանսը դառնում է կամաւոր զինուոր։

◆ Պետ. Դումայի անդամ Մակլակովը մեկնում է պատերազմի դաշտը իբրև գթութեան եղբայր։

◆ Մակս Լինդերը կենդանի է։

◆ Ֆէրդինանդ արքան շքանշան է պարգևել դեսպան Պոնչէվին Թիւրքբուլգարական միութեան գործին աջակցելուն համար։ Մի յատուկ պատգամաւորութիւն մեկնում է Կ. Պոլիս՝ Թիւրքիայի և Բուլգարիայի յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով։

◆ Ամերիկաբնակ լեհերը պատերազմի դաշտն են ուղարկում 150,000 կամաւորի։

◆ Անգլիական մամուլի պաշտօնական բիւրօն հրատարակել է հետևեալ հաղորդագրութիւնը. «Վերջին ժամանակներս տարածված լուրերը, թէ ռուս զինուորներ են ափ հանված Անգլիայում և Անգլիայով անցել են Ֆրանսիա ու Բելգիա, ճիշդ չեն։ Ճիշդ չէ նոյնպէս, թէ ռուսական զօրքերը ներկայումս գտնվում են Ֆրանսիական և բելգիական հողերում»։ Նոյն տեսակ հերքում է հրատարակված և բելգիական կառավարութեան կողմից։

◆ Պարիզի լրագիրները թէև հարկադրված են բացատրութիւններ տալ իրանց հաղորդութիւններին, այնու ամենայնիւ նրանք ամենքը միահամուռ նախատեսում են, որ անգլո-ֆրանսիական զօրքի մօտալուտ վրձռական յարձակումը անխուսափելի է։

«Echo de Paris»-ն ընդգծում է, որ վերջին երեք օրը ֆրանսիական զօրքի ձախ թևը բաւական առաջ է անցել։

«Matin»-ն ասում է, որ երկիրը շուտով հատուցում կը ստանայ իր համբերութեան համար։

«Petit Parisien»-ը գերմանացիների ֆրանսիական ճակատում շտապ կատարած գործողութիւնների մէջ տեսնում է այն ապացոյցը, որ ռուսական վտանգն ահեղ է դառնում։ «Times»-ի հաղորդութեան առիթով, թէ Վիլհելմը գտնվում է Արևելեան Պրուսիայում, «Figaro»-ն նկատում է, որ Վիլհելմը տեսաւ, թէ ֆրանսիացիները ինչպէս ջարդ տուին իր զօրքին Նանսիի մօտ, այժմ էլ տեսնելու է, թէ ինչպէս նրանց ջարդ կը տան ռուսները արևելեան ճակատում։

◆ «Р. Ут.»-ին հեռագրում են, որ Վառնայում լուրեր են պտտում, թէ բուլգարական պահեստի զօրքի մէջ, Դոբրուջայում, խիստ շարժում է տիրում՝ օֆիցերների կոպիտ վարմունքի հետևանքով։ Տուլչում շարժումը ապստամբութեան ձև է ընդունել։ Սպանված են երկու մայոր և մի կապիտան։ Ապըստամբող զօրքը փոխադրված է Բուլգարիայի ներքին նահանգները։

◆ Պետրոգրադից հաղորդում են «Баку» թերթին, որ այնտեղ ստացված տեղեկութիւնների համաձայն՝ Ատրպատականի հայերը 2000 հոգուց բաղկացած վաշտ են կազմում քիւրդերի դէմ։

◆ Նոյն տեղից հաղորդում են նոյն թերթին, որ, լուրերի համաձայն, թիւրքական կարնէտում նշանաւոր փոփոխութիւններ են լինելու։ Միջադէպի խաղաղ լուծման կողմնակից Զեմալ-փաշան թողնում է ծովային մինիստրի պաշտօնը և նշանակվում է Պարիզի թիւրքաց դեսպան։

◆ «Баку»-ն հաղորդում է, որ Գալիցիայում հիմնվում է պատ-հեռագրային շրջան։

◆ «Р. Сл.» հեռագրում են Տոկիոյից, որ եապօնական զօրքերը գրաւել են այն բարձունքները, որոնք չորս մղոն հեռու են գտնվում Ցինդաոյի գլխաւոր ամրութիւններից։

◆ «Утр. Р.»-ին հաղորդում են Բօրդոյից, որ Նանսիի մօտ բաւարական կրօնպրինցի բանակը ջարդ է կրել։ Կրօնպրինցը ինքը գերի է վերցվել։

◆ Նոյն լրագրին հաղորդում են Կոպէնհագէնից, որ Հիւսիսային Ֆրանսիայում տեղի ունեցող կռիւները գերմանացիներին կատարեալ կատաստրոֆա են սպառնում։ Դաշնակից զօրքերի եռանդուն գործողութեամբ կտրված է գերմանական զօրքի աջ թևը։ Բելգիացիները կտրել են գերմանական զօրքի կենտրոնագիծը, որով և ոչնչացրել են նրանց աջ թևի կապը գլխաւոր շտաբի հետ։

◆ Հերքվում է Բօզա Լիւքսենբուրգին գնդակահարելու լուրը։

◆ Աթէնքից հաղորդում են, որ յունաց թագաւորը անցել է Սալոնիկ, ուր գտնվում է յունական բանակի շտաբը։

◆ Պետերբուրգից հաղորդում են, որ անգլիական էսկադրան յածում է Սամսոնդամի մօտ։ Փարոսները հանգցված են։

◆ Վիլհելմը Բրեսլաւում հեծելազօրքին ուղղած իր ճառը վերջացրել է այսպէս. «Ցառաջ, մեր յաւիտենական թշնամու դէմ։ Մեր վերջնական նպատակն է՝ վերցնել Վարշաւան»։

◆ Կոպէնհագէնից հաղորդում են, որ Էլզասի գերմանացիները քաղցած են, որովհետև զրկված են հաց ստանալու հնարաւորութիւնից։

◆ Սուվալկի մօտ ռուսները ջարդել են գերմանական չորս կօրպուս։

◆ Ստոկհոլմից հաղորդում են, որ գերմանացիները շտապով ամրանում են Բէյնում։

◆ Բուդապեշտում ցոյց է։ Ցուցարարները բացագանչում են՝ «Հաբսբուրգները կործանեցին երկիրը»։

◆ Բրէսլաւում զինուորական մեծ խորհրդակցութեան մէջ վճռվել է արշաւանքի ձեռնարկել Ռուսաստանի դէմ չորս կէտից. դէպի Կովնո, Լոձ, Վարշաւա և Գալիցիա։ Խորհրդակցութեանը նախագահում էր Վիլհելմը։

◆ Մակեդոնիայում ընդհարումներ են բուլգար և սերբ հրոսակախմբերի միջև։

◆ Ստոկհոլմի գերմանական դեսպանատունը հերքում է կրօնպրինցի մահվան տեղեկութիւնը։

◆ Կոբուլէնցն մնացել է Գերմանիայում։

◆ Պետրոգրադում լեհական մի պատգամաւորութիւն ներկայացաւ Գօրեմիկինին, Բարկին և Տիմաշէվին և խնդրեց, որպէսզի պետական բանկը փոխարինաբար գումարներ բաց թողնէ Լեհական թագաւորութեան՝ պատերազմից վնասված ազգաբնակութեանը օգնելու համար։

◆ Իտալիան Աւստրիայից պահանջեց 5 միլիոն լիր իբրև վարձատրութիւն այն երկու շոգենաւերի համար, որոնք խորտակվեցին Ադրիատիկ ծովում աւստրիացիների դրած ականներին դիպչելով։ Բէրխտոլդը իր կառավարութեան անունից ներողութիւն խնդրեց։

◆ Հաղորդում են, որ Վիլհելմ կայսրը մեկնել է Գոշնան, որտեղից դիմելու է Վրիշէն-Կուանս ռազմագիծը։

◆ Գեներալ Գիլդենբուրդի զօրքը շտապով դիմում է Գալիցիա։

◆ Գեներալ Ֆրէնչը և գեներալ-խսիմուս Ժոֆֆրը պարգևատրվեցին Գեորգեվսկի շքանշանով։ Վերջինս շուտով յայտարարվելու է Ֆրանսիայի մարշալ։

◆ Բերլինում գումարվել է ըէյխստագի արտակարգ նստաշրջանը։

◆ Ֆրանկֆուրտ Մ./վ. գումարվում է գերմանացի տիրող իշխանների կոնգրէսը։

◆ Հաղորդում են, որ Վիեննայի ազգաբնակութեան մէջ լուր է տարածված, թէ աւստրիական գեներալ-շտաբի բարձր պաշտօնեաների մէջ երևան է հանված դաւադրութիւն. Ֆրանց-Յովսէփի պալատական բժիշկը խառն է դաւադրութեան։

◆ Լուրեր են պտտվում, թէ գերմանացիք ռումբեր են նետելու Լոնդոնի վրա աէրոպլաններից։ Ձեռք են առնված բոլոր նախազգուշական միջոցները։

◆ «Վօրվարտսի» հրատարակութիւնը վերսկսվել է։

◆ Գերմանական լրագիրների ասելով, գեներալ Մարտոսը կենդանի է և գտնվում է գերութեան մէջ։

◆ Կոմս Ցէպպէլինը մեկնել է պատերազմի դաշտը։

◆ Գերմանացիք ամրացնում են Դիւսէլդորֆը։ Փողոցներում դրված են թնդանօթներ։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

◆ «Р. Сл.»-ին հաղորդում են, որ Թիւրքիան արդէն է դրել օտարերկրացիների այն բոլոր նաւերի վրա, որոնք գտնվում են Կ. Պոլսում։

◆ Սեպտեմբերի 17-ից Կ. Պոլսից հեռագրում են «Р. Сл.»-ին, որ այդ օրը Թիւրքիայի օտարերկրեայ պաստային հիմնարկութիւնները դադարեցրին իրանց գործառնութիւնները։

◆ Սոֆիայից հեռագրում են «Р. Сл.»-ին, որ երբեակ համաձայնութեան պատգամաւորները յայտնել են Բ. Դրան, որ, եթէ նա պնդի կապիտուլացիաների հարցը միակողմանի կերպով անմիջապէս վճռելու վրա, Թիւրքիայի պետական պարտքերի մի մասը, որ ընկնում է բալկանեան պետութիւններին Եւրոպատրիայից։ Նոյն պատկերը կրկնվում էր նաև Սև-ծովի արևելեան և հարաւային ափերին եղած քաղաքներում և կուրորտներում, ինչպէս պատմում էին Բաթումից եկած ճանապարհորդները։

«Միայն Նովոռոսիյսկ քաղաքում,—ասում էին նրանք,—ցամաք իջան 850 ճանապարհորդներ»։ Այս բոլորը պատերազմի սարսափների շնորհիւն է կատարվում։ Երեկոյեան ընթրիքի ժամանակ ես ծանօթացայ ֆրանսիացի ծովային օֆիցէրների հետ և հարցրի, թէ ո՞րտեղից են գալիս նրանք։

— Սեվաստոպոլից,—պատասխանեց նրանցից մէկը,—այնտեղ թողնիք մեր ստատիոնները, իսկ ինքներս կանչված ենք պատերազմի ընդդէմ Գերմանիայի։

— Բայց ինչպէս կանցնէք Դարդանէլից,—առարկեցի ես,—քանի որ Թիւրքերը խրոտիւ հսկում են այն անցքերը։

— Մենք նախ գնում ենք Օդեսա, ապա կը նստենք առևտրական նաւ և այնպէս կանցնենք Արշիպելագոս, ուր գտնվում է ֆրանսիական նաւատորմիղը,—պատասխանեցին Ֆրանսիացիք։

Խօսակցութիւնը տևեց մինչև էս դիշեր. ես յիշեցրի երիտասարդ օֆիցէրներին Սեվաստոպոլի պաշարումը 1855—56 թ., թէ ինչպէս նրանց քաջ դօրավարներից մինը՝ Մակ-Մահոնը Մալախովի կուրգանի նուաճման միջոցին արտասանեց իր պատմական խօսքերը՝ «J'y suis, j'y reste», յետոյ ինչպէս նոյն մարեշալ Մակ-Մահոնը, իբրև Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ, հարկադրվեց հրաժարվել իր բարձր դիրքից, երևելի Լէօն Գամբետտայի արտասանած հետևեալ խօսքերից յետոյ՝ «Il faut se soumettre ou se démettre». Տաք-գլուխ և զուարթ երիտասարդները զարմացած իմ համեստ տեղեկութիւններից նրանց հայրենիքի վերջին ռազմական դարձան այն կողմը, և մեզ հաղորդեցին, թէ շոգենաւ է գալիս։ Անցան մի քանի սպասողական րոպէներ. հօրիզոնում նախ երևաց սև ծուխ, ապա կամաց-կամաց սկսեց նշմարվել ջրի մէջ խորնստած մի նաւ։ «Ականանա» աղաղակեցին մի քանի մարդիկ։ Եւ արդարև՝ կարճ միջոցից յետոյ մենք տեսանք, որ դա ականակիր էր, որ սրընթաց սլանում են ուղիղ մեր կողմը։

Երեք հարիւր քայլ հեռաւորութիւնից ականակիրի զինուորականներից մէկը շեփորը առնելով բերանը բարձրաձայն գոչեց՝ «Держать кильватеръ» (այսինքն հետևել իրան) և ինքը դարձաւ դէպի արևմուտք. մենք հետևեցինք նրան։ Նա առաջնորդեց մեզ և, տասն վերստ հեռու պահելով մեր նաւը Սեվաստոպոլից, տարաւ ու հասցրեց Стѣлецкая бухта, որ վեց վերստ հեռու է Սեվաստոպոլի մուտքից։ Այստեղ մեր նաւը երկու ժամ կանգնեց, իր բեռներն ու ապրանքները թողեց։ Բեռնակիրները բոլորը թիւրքիացի հայեր են, որոնք մի զարմանալի ճարպիկութեամբ շալակում էին ծանր հակերն ուրերի վրա, տանում ու դասաւորում էին ծովի ափին շտեմարանների առաջ։ Այստեղ բաւականին մարդ մտաւ նաւը և, իմիջի այլոց, ֆրանսիացի նաւորդներ, որոնց մէջ կային չորս օֆիցէր և մօտ 15 նաւաստիներ. բոլորը յատակ և վայելուչ կերպով էին հագնված։ Այստեղից նոյն կերպով ականակիրը առաջնորդեց մեզ երեք ժամ շարունակ և ապա թողեց ու հեռացաւ։ Այլ ես կասկած չը կար, որ Սեվաստոպոլի մօտ ականներ էին ձգված և ճանապարհը երկիւղալի էր։ Դիշերը ժամը 11-ին Եւպատորիայում ահագին բաղմութիւն մտաւ մեր նաւը. մարդիկ յատակի վրա անգամ քնում էին, кають-кампанія-ն լիքն էր, ասել ձգելու տեղ չը կար և մեծ մասամբ հրէաներ էին, իրանց բազմանդամ ընտանիքներով, որոնք փախչում էին Եւպատորիայից։ Նոյն պատկերը կրկնվում էր նաև Սև-ծովի արևելեան և հարաւային ափերին եղած քաղաքներում և կուրորտներում, ինչպէս պատմում էին Բաթումից եկած ճանապարհորդները։

«Միայն Նովոռոսիյսկ քաղաքում,—ասում էին նրանք,—ցամաք իջան 850 ճանապարհորդներ»։ Այս բոլորը պատերազմի սարսափների շնորհիւն է կատարվում։ Երեկոյեան ընթրիքի ժամանակ ես ծանօթացայ ֆրանսիացի ծովային օֆիցէրների հետ և հարցրի, թէ ո՞րտեղից են գալիս նրանք։

— Սեվաստոպոլից,—պատասխանեց նրանցից մէկը,—այնտեղ թողնիք մեր ստատիոնները, իսկ ինքներս կանչված ենք պատերազմի ընդդէմ Գերմանիայի։

— Բայց ինչպէս կանցնէք Դարդանէլից,—առարկեցի ես,—քանի որ Թիւրքերը խրոտիւ հսկում են այն անցքերը։

— Մենք նախ գնում ենք Օդեսա, ապա կը նստենք առևտրական նաւ և այնպէս կանցնենք Արշիպելագոս, ուր գտնվում է ֆրանսիական նաւատորմիղը,—պատասխանեցին Ֆրանսիացիք։

Խօսակցութիւնը տևեց մինչև էս դիշեր. ես յիշեցրի երիտասարդ օֆիցէրներին Սեվաստոպոլի պաշարումը 1855—56 թ., թէ ինչպէս նրանց քաջ դօրավարներից մինը՝ Մակ-Մահոնը Մալախովի կուրգանի նուաճման միջոցին արտասանեց իր պատմական խօսքերը՝ «J'y suis, j'y reste», յետոյ ինչպէս նոյն մարեշալ Մակ-Մահոնը, իբրև Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ, հարկադրվեց հրաժարվել իր բարձր դիրքից, երևելի Լէօն Գամբետտայի արտասանած հետևեալ խօսքերից յետոյ՝ «Il faut se soumettre ou se démettre». Տաք-գլուխ և զուարթ երիտասարդները զարմացած իմ համեստ տեղեկութիւններից նրանց հայրենիքի վերջին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԷՈԴՈՍԻԱՅԻ ՄՕՍԿՎԱ *)

(Ճանապարհորդական տպաւորութիւններ)

Ղրիմի հարաւային ափերն իրանց լեռներով, ամարանոցներով և ընութեան պէս-պէս և գեղեցիկ տեսարաններով շատ գրաւիչ են։ Ճանապարհորդները, զինված հեռադիտակներով, նաւի տախտակամածից անդադար զննում էին այդ հրաշալիքները, հաղորդելով միմեանց իրանց անձնական տպաւորութիւնները։ Ուրախ տրամադրութեանը ոչ սակաւ նպաստում էր նաև յուլիսեան գեղեցիկ արևը իր ոսկեփայլ ճառագայթներով, որոնք չորս կողմը կենդանութիւն էին տարածում։

Շոգենաւը սիգաձեմ ընթանում է. նրա աջ կողմից ցամաքի տեսարանները անընդհատ փոփոխվում են ու անցնում. իսկ ձախից անհուն ովկիանոս է, որի մակերևոյթի վրա երբեմն հեռուից նշմարվում են մի շարք զինուորական նաւեր։ Զը մոռանանք, որ այժմ պատերազմի ժամանակ է և ճանապարհորդների շրջանում այդ առիթով տաք խօսակցութիւններ են տեղի ունենում։ Ամենաքիչ իր զայրոյթն է արտայայտում Գերմանիայի հացէին, դրա ապերախտութեան համար Ռուսաստանի վերաբերութեամբ։ Գերմանացիք օրչափ բարիք տեսան ռուսաց կայսրներից 1812, 1848 և 1870—71 թուականներին և այժմ վեր են կացել պատերազմելու ռուսաց դէմ։

Ահա չորս ժամից անց է. ասում են, թէ մեր նաւը չեն թողնի մտնել Սեվաստոպոլ. մինչ երկիւղ կայ։

Այդ ընդհանուր տարակուսանքի միջոցին հեռուից մեր առաջ մի սև կէտ երևաց։ Հեռադիտակները դարձան այն կողմը, և մեզ հաղորդեցին, թէ շոգենաւ է գալիս։ Անցան մի քանի սպասողական րոպէներ. հօրիզոնում նախ երևաց սև ծուխ, ապա կամաց-կամաց սկսեց նշմարվել ջրի մէջ խորնստած մի նաւ։ «Ականանա» աղաղակեցին մի քանի մարդիկ։ Եւ արդարև՝ կարճ միջոցից յետոյ մենք տեսանք, որ դա ականակիր էր, որ սրընթաց սլանում են ուղիղ մեր կողմը։

Երեք հարիւր քայլ հեռաւորութիւնից ականակիրի զինուորականներից մէկը շեփորը առնելով բերանը բարձրաձայն գոչեց՝ «Держать кильватеръ» (այսինքն հետևել իրան) և ինքը դարձաւ դէպի արևմուտք. մենք հետևեցինք նրան։ Նա առաջնորդեց մեզ և, տասն վերստ հեռու պահելով մեր նաւը Սեվաստոպոլից, տարաւ ու հասցրեց Стѣлецкая бухта, որ վեց վերստ հեռու է Սեվաստոպոլի մուտքից։ Այստեղ մեր նաւը երկու ժամ կանգնեց, իր բեռներն ու ապրանքները թողեց։ Բեռնակիրները բոլորը թիւրքիացի հայեր են, որոնք մի զարմանալի ճարպիկութեամբ շալակում էին ծանր հակերն ուրերի վրա, տանում ու դասաւորում էին ծովի ափին շտեմարանների առաջ։ Այստեղ բաւականին մարդ մտաւ նաւը և, իմիջի այլոց, ֆրանսիացի նաւորդներ, որոնց մէջ կային չորս օֆիցէր և մօտ 15 նաւաստիներ. բոլորը յատակ և վայելուչ կերպով էին հագնված։ Այստեղից նոյն կերպով ականակիրը առաջնորդեց մեզ երեք ժամ շարունակ և ապա թողեց ու հեռացաւ։ Այլ ես կասկած չը կար, որ Սեվաստոպոլի մօտ ականներ էին ձգված և ճանապարհը երկիւղալի էր։ Դիշերը ժամը 11-ին Եւպատորիայում ահագին բաղմութիւն մտաւ մեր նաւը. մարդիկ յատակի վրա անգամ քնում էին, кають-кампанія-ն լիքն էր, ասել ձգելու տեղ չը կար և մեծ մասամբ հրէաներ էին, իրանց բազմանդամ ընտանիքներով, որոնք փախչում էին

*) Տես «Մշակ» № 211։

*) Նա ինձ ընծայեց XVII դ. մի ձեռագիր, մագաղաթի վրա գրված նոտ գրով, որի խորագիրն է՝ «Սրբոյն Գրիգորի եպիսկոպոսի նիւաթցւոյ յաղագս ընութեան մարդոյ ասացեալ»։ Դրան ես կը նուիրեմ մի առանձին ուսումնասիրութիւն։ Մ. Զ.

ԵԱՐՕՍԼԱՒՈՒՄ

Բանաստեղծ Վալերի Բրիւսով գրում է «Р. Вѣд.»-ում. «Աւստրօբրլով այցելեցի Եարօսլաւը և նրա շրջակայքը։ Եարօսլաւում բոլոր շինութիւնները և կառուցուածքները անվնաս են. կոտրած ապակիանգամ չի նկատվում։ Սովորական կանքը կամաց-կամաց վերսկսվում է,—բացվում են խանութները, կաֆէները, բեստօրանները. առևտուրը եռում է. ամենուրեք լսվում է ռուսական լեզուն, որ տեղացիները գեղեցիկ կերպով իմանում են։ Գործում է ռուսական դրամը—արծաթն ու թուղթը. կուպոնը գնահատվում է 30 կոպէկ։ Կարգը պահպանում են աւստրիական ոստիկանները։

«Եարօսլաւի մօտի ամրութիւնները չափազանց ամուր էին և կարծվում էր, որ յամառ դիմադրութիւն ցոյց կը տան և տեսական պաշտպանութիւն։ Ամբողջը շրջապատված էր փշածածկ երկաթգծանկապատով, 30 վերստ շրջագծով։ Ամրութիւններից իւրաքանչիւրը պատված է խոր փոսերով և պատված է փշոտ երկաթալարով։ Ամրութիւնները պողպատից կառուցված շէնքեր, մու կրակից հեռու մնալու համար տարանջէներ թնդանօթների համար, ներ, զէնքի պահեստներ։ Սակայն ռուսների գրոհը ստիպեց աւստրիացիներին խուսափել դիմել, թողնելով ուսեստի մատերքի հսկայական պաշարներ։ Դրում մինչև այժմ կան չը պարպված դակների և ռումբերի բլուրներ, քաղաքի վառոդ։ Քաղաքը գրաւվեց առանց կռիվի։

«Գալիցիայի բնակիչները ռուսներին մաւորում են բարեկամաբար։ Բոլոր պարհներով դեռ գնում են աւստրիական զինուորների խմբեր, որոնք իրանց գրաւվերաբերվում են անտարբեր։ Գալիցիայի բնակիչները վերսկսել են դաշտային գործերը»։

Մ. ԳՕՐԿԻԻ ՆԱՄԱԿԸ

Շալեապինը, որ Մարիինսկի թատերի ներկայացում է կազմակերպում վիրաւոր զինուորների օգտին, մի նամակով դիմեց Գորկիին, խնդրելով նրան մասնակցել ներկայացմանը։ Այժմ Շալեապինը Գորկուց ստացել է մի նամակ, որի մէջ վերջին շարք հետաքրքրական մտքեր է յայտնում պատերազմի մասին։

«Այս պատերազմը,—ասում է Գորկին,—կարծես վերածնել է ինձ։ Սկզբում ես հակառակորդ էի պատերազմին, պատրաստ էի իմ բոլոր ոյժերը գործ դնել միայն համար, որ առաջն առնեմ ամեն պատերազմ։ բայց այժմ գերմանացիները իրենց արիւնոտ թաթը դրել են սրբազան վրա։ Ուր եղել նրանք, այնտեղ խոնարհել։ և այս ամեն աւերումներն ու վնասները միայն նրա համար, որ նրանցում չը կայ անգամ ստուերը կուլտուրայի, որով նրանք յաճախ և բարձրաձայն պարծենում էին։ Ձեր ձեռնարկութիւնը, թանգագին Ֆէօդոր Իվանովիչ, ջնջում եմ ամբողջ հոգով, որովհետև օգնութիւն է հարկաւոր մեր զինուորներին, մեր մոխրագոյն հոգոց հերոսներին։ Ամենքին մենք պարտաւոր ենք օգնել։ Չով կարող ենք։ Ես անմիջապէս կը գրեմ Պետրոգրադ ձեր երեկոյթին մասնակցելու։ Այդ երեկոյթին Գորկին կարդաց հէնց նոր վերջացրած պոէման։

ՀԱՅ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

«Մշակի» ընթերցողների համար տարբերական չի լինի պատերազմի մինի դէպքերի նկարագիրը։ Աւագ ոստիկան օֆիցէր Գէորգեանի պատմածից երևաց, նրանց մի գումարտակը էջդուխնէի մոտ ամբողջ 9 ժամ կռուել է գերմանական գնդի դէմ—35-րդ, 38-րդ և 41-րդ գնդերի։ Առաւօտեան ժամը 6-ին սկսվում է գերմանացիների կողմից մի այնպիսի սոսկալի թնդանօթաձգութիւն, որից 3 հոգի խելագարվում են. վիրաւորների աղեղնաձայնը առաւել ոգեորում է յարձակողներին և վճռատեսնում պաշտպանվող ստուգաթիւ զօրքին։ Գումարտակը պաշտպանվում է հերոսաբար. սակայն ինչ կարող անել առանց թնդանօթների, միայն գնդակաձիրով մօտ 10,000-ի չափ զօրքի դիմաց։ Գերմանացիները ամբողջ 9 ժամ կռուելուց յետոյ ստիպված էին գնալ դէպի Գրիշինեվ. ես յուսով էի, որ կէսօրվայ ժամը 2-ին կը հանեմ։ Բայց մեծ եղաւ զարմանքս, երբ Բաղէլի կայարանը հասնելով ժամը 9-ին, իմացայ, որ այնտեղ սպասելու ենք մինչև երեկոյ ժամը 8-ը։ Ուրիշ ելք չէր մնում. պարտաւոր հաշվեցինք անդառնալի իրողութեան։ Գնդակն էլ անտանելի էր և անդադար մանր անձրև էր մաղում։ Առաւօտից ոչ մի ուտելիք չէ երեկոյ կայարանի մօտից անցան քանի ինց աւելի զինուորական գնացքներ զինուորներով, զէնքերով և պատերազմական պարագաներով։ Կանգնած գնացքները, որոնց մէջից ուրախ ու խոյժ զինուորները իջնում էին տաք ջրի հաց, միրգ գնելու։ Այսպիսի հանգամանքներում երբ գնացքներից մէկը կանգ առաւ կայարանի առաջ, մի վագոնից դուրս եկին

տեսնում է այն ապացոյցը, որ ռուսական վտանգն ահեղ է դառնում։ «Times»-ի հաղորդութեան առիթով, թէ Վիլհելմը գտնվում է Արևելեան Պրուսիայում, «Figaro»-ն նկատում է, որ Վիլհելմը տեսաւ, թէ ֆրանսիացիները ինչպէս ջարդ տուին իր զօրքին Նանսիի մօտ, այժմ էլ տեսնելու է, թէ ինչպէս նրանց ջարդ կը տան ռուսները արևելեան ճակատում։

◆ «Р. Ут.»-ին հեռագրում են, որ Վառնայում լուրեր են պտտում, թէ բուլգարական պահեստի զօրքի մէջ, Դոբրուջայում, խիստ շարժում է տիրում՝ օֆիցէրների կոպիտ վարմունքի հետևանքով։ Տուլչում շարժումը ապստամբութեան ձև է ընդունել։ Սպանված են երկու մայոր և մի կապիտան։ Ապըստամբող զօրքը փոխադրված է Բուլգարիայի ներքին նահանգները։

◆ Պետրոգրադից հաղորդում են «Баку» թերթին, որ այնտեղ ստացված տեղեկութիւնների համաձայն՝ Ատրպատականի հայերը 2000 հոգուց բաղկացած վաշտ են կազմում քիւրդերի դէմ։

◆ Նոյն տեղից հաղորդում են նոյն թերթին, որ, լուրերի համաձայն, թիւրքական կարնէտում նշանաւոր փոփոխութիւններ են լինելու։ Միջադէպի խաղաղ լուծման կողմնակից Զեմալ-փաշան թողնում է ծովային մինիստրի պաշտօնը և նշանակվում է Պարիզի թիւրքաց դեսպան։

◆ «Баку»-ն հաղորդում է, որ Գալիցիայում հիմնվում է պատ-հեռագրային շրջան։

◆ «Р. Сл.» հեռագրում են Տոկիոյից, որ եապօնական զօրքերը գրաւել են այն բարձունքները, որոնք չորս մղոն հեռու են գտնվում Ցինդաոյի գլխաւոր ամրութիւններից։

◆ «Утр. Р.»-ին հաղորդում են Բօրդոյից, որ Նանսիի մօտ բաւարական կրօնպրինցի բանակը ջարդ է կրել։ Կրօնպրինցը ինքը գերի է վերցվել։

◆ Նոյն լրագրին հաղորդում են Կոպէնհագէնից, որ Հիւսիսային Ֆրանսիայում տեղի ունեցող կռիւները գերմանացիներին կատարեալ կատաստրոֆա են սպառնում։ Դաշնակից զօրքերի եռանդուն գործողութեամբ կտրված է գերմանական զօրքի աջ թևը։ Բելգիացիները կտրել են գերմանական զօրքի կենտրոնագիծը, որով և ոչնչացրել են նրանց աջ թևի կապը գլխաւոր շտաբի հետ։

◆ Հերքվում է Բօզա Լիւքսենբուրգին գնդակահարելու լուրը։

◆ Աթէնքից հաղորդում են, որ յունաց թագաւորը անցել է Սալոնիկ, ուր գտնվում է յունական բանակի շտաբը։

◆ Պետերբուրգից հաղորդում են, որ անգլիական էսկադրան յածում է Սամսոնդամի մօտ։ Փարոսները հանգցված են։

◆ Վիլհելմը Բրեսլաւում հեծելազօրքին ուղղած իր ճառը վերջացրել է այսպէս. «Ցառաջ, մեր յաւիտենական թշնամու դէմ։ Մեր վերջնական նպատակն է՝ վերցնել Վարշաւան»։

◆ Կոպէնհագէնից հաղորդում են, որ Էլզասի գերմանացիները քաղցած են, որովհետև զրկված են հաց ստանալու հնարաւորութիւնից։

◆ Սուվալկի մօտ ռուսները ջարդել են գերմանական չորս կօրպուս։

◆ Ստոկհոլմից հաղորդում են, որ գերմանացիները շտապով ամրանում են Բէյնում։

◆ Բուդապեշտում ցոյց է։ Ցուցարարները բացագանչում են՝ «Հաբսբուրգները կործանեցին երկիրը»։

◆ Բրէսլաւում զինուորական մեծ խորհրդակցութեան մէջ վճռվել է արշաւանքի ձեռնարկել Ռուսաստանի դէմ չորս կէտից. դէպի Կովնո, Լոձ, Վարշաւա և Գալիցիա։ Խորհրդակցութեանը նախագահում էր Վիլհելմը։

◆ Մակեդոնիայում ընդհարումներ են բուլգար և սերբ հրոսակախմբերի միջև։

◆ Ստոկհոլմի գերմանական դեսպանատունը հերքում է կրօնպրինցի մահվան տեղեկութիւնը։

◆ Կոբուլէնցն մնացել է Գերմանիայում։

◆ Պետրոգրադում լեհական մի պատգամաւորութիւն ներկայացաւ Գօրեմիկինին, Բարկին և Տիմաշէվին և խնդրեց, որպէսզի պետական բանկը փոխարինաբար գումարներ բաց թողնէ Լեհական թագաւորութեան՝ պատերազմից վնասված ազգաբնակութեանը օգնելու համար։

◆ Իտալիան Աւստրիայից պահանջեց 5 միլիոն լիր իբրև վարձատրութիւն այն երկու շոգենաւերի համար, որոնք խորտակվեցին Ադրիատիկ ծովում աւստրիացիների դրած ականներին դիպչելով։ Բէրխտոլդը իր կառավարութեան անունից ներողութիւն խնդրեց։

◆ Հաղորդում են, որ Վիլհելմ կայսրը մեկնել է Գոշնան, որտեղից դիմելու է Վրիշէն-Կուանս ռազմագիծը։

◆ Գեներալ Գիլդենբուրդի զօրքը շտապով դիմում է Գալիցիա։

◆ Գեներալ Ֆրէնչը և գեներալ-խսիմուս Ժոֆֆրը պարգևատրվեցին Գեորգեվսկի շքանշանով։ Վերջինս շուտով յայտարարվելու է Ֆրանսիայի մարշալ։

◆ Բերլինում գումարվել է ըէյխստագի արտակարգ նստաշրջանը։

◆ Ֆրանկֆուրտ Մ./վ. գումարվում է գերմանացի տիրող իշխանների կոնգրէսը։

◆ Հաղորդում են, որ Վիեննայի ազգաբնակութեան մէջ լուր է տարածված, թէ աւստրիական գեներալ-շտաբի բարձր պաշտօնեաների մէջ երևան է հանված դաւադրութիւն. Ֆրանց-Յովսէփի պալատական բժիշկը խառն է դաւադրութեան։

◆ Լուրեր են պտտվում, թէ գերմանացիք ռումբեր են նետելու Լոնդոնի վրա աէրոպլաններից։ Ձեռք են առնված բոլոր նախազգուշական միջոցները։

◆ «Վօրվարտսի» հրատարակութիւնը վերսկսվել է։

◆ Գերմանական լրագիրների ասելով, գեներալ Մարտոսը կենդանի է և գտնվում է գերութեան մէջ։

◆ Կոմս Ցէպպէլինը մեկնել է պատերազմի դաշտը։

◆ Գերմանացիք ամրացնում են Դիւսէլդորֆը։ Փողոցներում դրված են թնդանօթներ։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

◆ «Р. Сл.»-ին հաղորդում են, որ Թիւրքիան արդէն է դրել օտարերկրացիների այն բոլոր նաւերի վրա, որոնք գտնվում են Կ. Պոլսում։

◆ Սեպտեմբերի 17-ից Կ. Պոլսից հեռագրում են «Р. Сл.»-ին, որ այդ օրը Թիւրքիայի օտարերկրեայ պաստային հ

Դրութիւնը կրիտիկական է, բայց որոշում են մինչև վերջին շունչը կռուել և ետ չը նահանջել, որպէսզի ձեռքից բաց չը թողնեն էյդկունէնի պէս նշանաւոր կայարանը։ Կռուի տաք ժամանակ զինուորներից մէկը հեծանիւով շտապում է մօտիկ կայարանը, որտեղ ռուս զօրքը կենտրօնացած է լինում, ու թնդանօթ խնդրում։ Որոշվում է մի քանի թնդանօթ ուղարկել օգնութեան, իսկ մնացածով 7 վերստից սկսում են ռմբակոծել։ երկրորդ գնդակը հասնում է իր նպատակին, գերմանացոց շարքերն իրարանցման մէջ են։ Նրանք շտապում են գրոհ տալ սուլիններով։ Վիրաւորների պատմածից երևում է, ռուսական հրացանն այնպէս է յարմարացված, որ սուլինը հրացանին հագցրած հնարաւոր է և յարձակվել, և գնդակ ձգել։ գերմանական հրացանը սուլինով անկարող է արձակել, ուստի սուլինը զինուորի կողքից կախված է և գրոհ տալու դէպքում միայն հագցվում է հրացանին։ Ահա էյդկունէնի մօտ սուլինները հրացաններին հագցնելուց առաջացած աղմուկից ռուս զօրքը եզրակացնում է, որ գերմանացիք գրոհ են տալու։ Գլխաւոր հրամանատարը աղաղակում է. «Տղէրք, խաչ արէք երեսներդ. մեռնելու ենք, պատով մեռնենք բովանդակ Ռուսաստանը մեզ է նայում»։

«Լէյրէք հրացանները, արձակեցէք...» անմիջապէս գերմանական առաջին շարքերը գետնին են փռվում։ Գալիս է երկրորդ շարքը... դարձեալ փռվում։ Երրորդ յարձակման՝ ռուսական գնդակացիրները մանգաղի պէս հնձում են գերմանական շարքերը։ Օգնութեան են հասնում նաև թնդանօթները և սկսում 2 վերստ հեռաւորութիւնից արձակել։ գերմանացիք շփոթվում են։ թուում է նրանց, թէ ռուսները մեծ օգնութիւն ստացան, իսկոյն փախուստի են դիմում... Գումարտակը ազատ շունչ է քաշում. թշամին խայտակառակօրէն պարտվել ու փախել է։ Գիշերը պահպանները են նշանակում, իսկ իրանք հանգիստ քուն լինում։ Առաւօտեան լուսածագին տեսնում են, որ գաշտը ծածկված է գերմանական մի քանի հարիւր դիակներով։

Վիրաւորված զինուորների անունները.

1) Աբգար Մինասեանց Դաղլեցի (Երևանի նահ.), ձախ ձեռքի մատները ջարդված էին. ընկճված էր չափազանց։

2) Գէորգ Գէորգեան Ամիրաղեանց Թիֆլիսեցի, վիրաւորված ձախ ձեռքից թեթև։

3) Ենովք Մնացականեան Կարապետանց դարալագեազցի, թեթև վիրաւորված։

4) Գարեգին Անուշաւանեան Խարաղանց, Լօռու Ուզունլարից, հիւանդացած էր։

5) Կնեազ Տէրտերեանց, մեծարաքելցի (Երև. ն.), ձախ թեւից վերժբօլօյի մօտ, թեթև։

6) Օգանեսով Արտէմ, Շամախու գաւառացի, ձախ ձեռքից, Վերժբօլօվոյի մօտ, թեթև։

7) Բօյախչեանց Աբգար համամլուեցի, ձախ թեւից, Վերժբօլօվոյի մօտ, թեթև։

8) Ռոստոմ Քօչարեանց, Երևանի նահ., սպանվել է Վերժբօլօվոյի մօտ։

9) Զօրապետ Նազարեանց, դարալագեազցի, գնդակը մտել է մի կողից միւսը օդոստոսի 7-ին, առողջացել էր բոլորովին. նորից գնաց պատերազմի։

10) Սրապիոն Մանուկեանց, շօրագեալցի (Կարսի գաւ.). հիւանդ էր։

11) Անդրէաս Սահակեանց Ջաւարբաղցի (Էջմիածնի գաւ.), հիւանդ էր։

12) Մարկոս Տէր-Կարապետեանց, Բերնա գիւղից (Կարսի շրջան), ձախ ոտքից. գանգրենա սկսվելու պատճառով ծնկից ցածր կտրել էին ոտքը, վիրաւորված աւստրիացոց սահմանում օգոստոսի 15-ին։ Առողջանում է։ Արսէն ք. Սիմէօնեանց

Մօսկվա, 15 սեպտ.

(Կը շարունակվի)

ԲՈՒՐՑԵՎԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ֆինլանդիայի Բաւմօ կայարանում, Պարիզից վերադառնալու միջոցին, ձերբակալվեց յայտնի էմիգրանտ Վ. Լ. Բուրցեվ։

Բուրցեվը Ռուսաստան է եկել Լօնդոնի վրայով, որտեղից ծովով ուղևորվել է Շվէդիա։ Ստօկհօլմից «Լիւլիա» նաւով նա մեկնել է Բաւմօ։

Այս կայարանում, անցագրերի սովորական ստուգման ժամանակ, Բուրցեվը ժանդարմական իշխանութիւններին ներկայացրեց իր անցագիրը։

Հէնց այդտեղ էլ նա հրաւիրվեց ժանդարմական շէնքը և յետոյ ժանդարմական օֆիցէրների ուղեկցութեամբ առաջին իսկ գնացքով ուղարկվեց Բելօստրով կայարանը և այնուհետև մի քանի ժամից յետոյ բերվեց Պետրօգրադ։

Այն անձինք, որոնք ճանապարհորդութեան ժամանակ առիթ են ունեցել խօսելու Բուրցեվի հետ, հետևեալն են պատմում։

«Համաժողովրդական ոգու այն բարձրացումը Ռուսաստանում, որի մասին Բուրցեվը կարդացել է Ֆրանսիական լրագրներում, և հաղորդութիւնները ռուս հասարակական և քաղաքական խմբակցութիւնների մասին, անկախ նրանց կուսակցական և ազգային երանգից, նրան համոզել են, որ Ռուսաստանում ներկայումս չը կայ կուսակցութիւն, չը կայ ազդայնութիւն, կայ միայն մի մեծ, հզօր ռուս ժողովուրդ։

«— Ես,—ասել է Բուրցեվը իր ուղեկիցներին,—այս մեծ ժամանակին չէի կարող մնալ մեր բարեկամ երկրում, չէի կարող մնալ այն ժողովրդի մէջ, որի մէջ ես անց եմ կացրել տասը տարի և որին սովորել եմ. չը կարողացայ մնալ այնտեղ և ցանկացայ շուտով Ռուսաստանում լինել, իմ հայրենիքում, որին ես սիրում եմ անհուն և չեմ սիրում։ Այժմ երբ Ռուսաստանը կանգնել է հզօր թշնամու հանդէպ, երբ նրա բոլոր ժողովուրդները որպէս մի մարդ կոչ են անում Գերմանիայի հետ կռուելու, այլ ես խօսք անգամ չի կարող լինել որևէ ազգային, քաղաքական և հասարակական տարաձայնութիւնների մասին։

«Հասել է ժամը, երբ պէտք է չքանան բոլոր պատնէշները և երբ ժողովուրդը պէտք է հաշտվի կառավարութեան հետ և կառավարութիւնը ժողովրդի հետ։ Դէպի իմ հայրենիքն ունեցած սիրուց բացի, իմ հայրենիք վերադառնալս ունի միանգամայն որոշ նպատակ՝ գործ դնել իմ բոլոր ջանքերը կառավարիչ շրջանները հասարակութեան հետ միացնելու վրայ։ Ես գնում եմ Ռուսաստան և հանգիստ եմ իմ վիճակի համար»։

* * *

Բուրցեվի ձերբակալման առիթով «Բ. Ս.»-ն ասում է. «Ինչպէս մեզ հաղորդում են ներքին գործերի մինիստրութեան մօտ շրջաններից, Բուրցեվի բանտարկութեան մասին կարգադրութիւն է արվել շատ վաղուց, միաժամանակ, երբ նրա դէմ յարուցվեցին դատական մի շարք գործեր։

«Այդ՝ իր ոյժի մէջ մնացած կարգադրությունը—Բուրցեվին գտնելու և դատի բերելու մասին,—իր ժամանակին արվել է դատական վարչութեան կողմից։

«Հաւատացնում են, որ Բուրցեվին ձերբակալելու մասին ոստիկանութեան դեպարտամենտ ի կողմից ոչ մի կարգադրութիւն չի եղել։ Այդ պատճառով էլ Բուրցեվի ձերբակալումը ներքին գործերի մինիստրութեան համար անսպասելի էր։ Անմիջապէս հարցում է արված Բաւմօյի իշխանաւորներին, օրինք և հաստատել են Բուրցեվի ձերբակալութեան լուրը, միաժամանակ հաղորդելով որ Բուրցեվը պահակախմբով ղեղարկվել է Պետրօգրադ։

«Բուրցեվի ազատութեան հարցը—գրաւականով կամ երաշխաւորութեամբ—կախված է արդարադատութեան մինիստրութիւնից։

«Ներքին գործերի մինիստրութիւնը իր կողմից ոչ մի խոչընդոտ չի յարուցանի, եթէ արդարադատութեան մինիստրութիւնը հնարաւոր գտնի այդ»։

* * *

«Հ. Ե.»-ում կարդում ենք. «Ինչպէս լսեցինք, Վ. Լ. Բուրցեվը ներքին գործերի մինիստրի անունով ներկայացրեց մի գրութիւն, որի մէջ նա իր՝ Ռուսաստան վերադառնալը բացատրում է հայրենասիրական ընոյթի շարժառիթներով։ Այդ գրութիւնը, ինչպէս մեզ հաղորդում են, յանձնվեց մինիստրների խորհրդին, որ դէպի այդ ուշադրութեամբ վերաբերվեց։ Այդ պատճառով կառավարական շրջաններում հարց է յարուցված Բուրցեվին ազատելու մասին։ Այդ հարցը մինիստրների խորհուրդը կը քննէ այս օրերում»։

ՄԻ ԿԱՎԱԼԵՐԻՍՏԻ ՕՐԱԳՐԻՑ

«Բ. Ս.»-ում տպված է հեծելազնդի մի զինուորի օրագրից հետևեալ հատուածը.

«Այսօր հանգստի առաջին օրն է։ Լուցկից ամբողջ դիվիզիայով 50—60 վերստը կարել ենք 24 ժամվայ ընթացքում։ Գիշերը նոյնիսկ ձիերի թամբերը չենք վերցրել, և նստած ենք եղել սանձած ձիերի վրա։ Ամենուրեք անանցանելի ճահիճներ են, և դժոխային խոնաւութիւն ու ցրտութիւն։

«Երեկոյեան ժամը 5-ին մենք կռուի բռնվեցինք, որի նմանը դեռ չի եղել։

«Մենք ստիպված էինք բռնել մի փոքրիկ դաշտ, որը լի էր փոսերով ու ճահիճներով, իսկ աւստրիացիները բռնել էին մեզնից 1½ վերստ հեռու ընկած բլուրը։

«Մեր թնդանօթաձիգները կրակ բացին նրանց վրա։

«Մեր ամեն մի թնդանօթը արձակում էր 78 ռումբ։ Նրանք մեզ պատասխանեցին շրապնելով և մեզ ստիպեցին անտառ մըտնել, ուր մենք 1½ ժամ կանգնեցինք և լսում էին շրապնելի շանթիւնը։

Կրակի տակ շարժվելը ոչինչ, բայց երբ կանգնում ես այդ դղրդիւնի և որոտի տակ, շատ անախորժ է։

«Օֆիցէրների և զինուորների զգացողութիւնը այսպէս է.—երկիւղ չը կայ, բայց սարսափելի վիշտ է պատում մարդուն։

«Արևն սկսեց ելնել, երբ ուռնդարների երեք էսկադրոն յարձակում գործեցին մեր երկու բատարէյայի վրա։

«Ներանք դէպի մեզ թռչում էին ինչպէս սև ամպ, ինչպէս մրրիկ։

«Մեր գնդակացիրը սրբում էր նրանցից ամբողջ շարքեր, բայց նրանք էլի թռչում էին դէպի մեզ։

«Այդ ժամանակ մեր հուսարների երկու էսկադրոնը յարձակվեցին նրանց վրա, և սկսվեց ճակատամարտ։

«Թնդանօթաձիգները կուում էին ամէն բանով, ինչ ձեռքներն էր ընկնում, մինչև անգամ բռունցքներով։

«Ամենքը կոտորում, խողխողում, գընդակահարում էին։ Պատերազմի դաշտ բոլոր փոսերն ու ճահիճները լցվեցին մարդկանցով ու ձիերով։ Մենք գրեթէ նրանց բոլորին կոտորեցինք և խողխողցինք։ Կենդանի մնացած 15—20 հոգին ձիերը բաց թողին բօստաններում և պանէչնիչից ու բակերից սկսեցին կրակել։

«Բարեբաղդաբար այդ ժամանակ գիշերը բացավառվեց, և մենք հրդեհվող խրճիթների լոյսով գտանք նրանց ամենքին։

«Մութը պատերազմի դաշտում զարհուրելի է։

«Այստեղ մնալն այլևս անկարելի էր։ Մենք շարժվեցինք առաջ և անցանք գետը։ Այստեղ. խնամքով ամեն ինչ հեռացուցել կանգ առանք հանգստանալու։

«Այս ընդհարումը փոխեց իմ կարծիքը մաշարների մասին։ Նրանք աներկիւղ դիմում էին մահի և թերով այնպէս էին գործում, ինչպէս կացնով։

«Ուժեղ տպաւորութիւն թողեց ինձ վրա ունդարական մի օֆիցէր։ Նա գեղեցիկ էր և ձեռքի հրացանով կուում էր այնպէս, ինչպէս ամենի առիւծ։ Բայց մեր հուսարներից մի քանիսը սուլինի ծայրը հանեցին նրան։

«Ներանց վիրաւորները, որ մեռնելուն մօտ էին, պառկած տեղները կրակում էին աւտրճանակներից և սրով կտրում մեր ձիերի ոտքերը։ Նրանք կուում էին մինչև արեան վերջին կաթիլը, և 400 հոգին էլ պառկեցին, ինչպէս մի մարդ։

«Մեր կորուստները քիչ են։

«Մեր զինուորներից շատերը պարգևատրված են։

«Ես ստացել եմ IV աստիճանի Անն։

«Սարսափելի պատկեր էր գիշերը, երբ մենք վերադառնում էինք պատերազմի դաշտից։

«Մռայլ լռութիւն, խաւար ու մութ գիշեր և մեր շուրջը կրակ ու հրդեհ։

«Բոլոր օֆիցէրները, որ մասնակցել են եռաօրեայ կռիւին, ասում են, որ այսպիսի սարսափելի ճակատամարտ հեծելազնդի կողմից չեն յիշում։ Ցարձակումները կատարվում են ամբողջ դիվիզիաներով։ Մեր դիվիզիան յարձակում գործեց թշնամու 4-րդ դիվիզիայի վրա և կոտորեց գրեթէ բոլորին, մօտ 4000 մարդու։

«ԽԱՂԱՂ» ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ

(Օֆիցէրի նամակից)

Մեր զօրքերը գտնվում էին Ինստերբուրգի մօտ։ Ցարձակումը շարունակվում էր։

Դեռ այն ժամանակ մեր զօրքի շտաբը ցուցումներ էր ստացել այն մասին, որ գերմանական այն խաղաղ բնակիչները, որոնց մէջ, ուսներս, ամեն կերպ հեռու էինք պահում պատերազմի պատուհասներից, և որոնց վերաբերվում էին լիակատար վստահութեամբ, նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ լրտեսներ։

Եւ նրանք, և ուրեմն այն մարդիկ, որոնք վաղորդայն ազատվել էին փախուստով, իսկ մեր զօրքերի ներս մտնելով նորից վերադարձան և դիմաւորվեցին գրեթէ գրկաբաց, դրանք կանոնաւոր կերպով, բազմաթիւ գաղտնի կառուցումների օգնութեամբ, հաղորդակցում էինք գերմանական զօրքի հետ մեր զօրքի բոլոր տեղաշարժութիւնների մասին։

Այդ «խաղաղ բնակիչների» լրտեսութիւնը անկասկածելի էր, բայց մենք գլխի չէինք ընկնում, թէ ինչ կերպ կարող էին նրանք հաղորդել իրանց դիտողութիւնները այն բանից յետոյ, երբ ստորերկրեայ հեռախօսի և հեռագրի գծերը մասամբ կտրված և մասամբ առանձնացրել էինք մենք։

Փախչողներ նոյնպէս չը կային։

Մի խօսքով, այսպէս ասած «տեսանելի» չէր կարող լինել ոչ ցերեկը, ոչ գիշերը։ Մնում էր ենթադրել, որ գերմանացիները իրանց ռազմական նպատակների համար նախօրօք պատրաստել են ստորերկրեայ յատուկ կաբելներ։

Ցետագայում այդ ենթադրութիւնները շատ անգամ արդարացան իսկապէս։

Այսպէս, Մարգրաբով աւանում դպրոցի ուսուցչի մօտ մենք գտանք հեռախօս, որի գործիքը գտնվում էր... շորի պահարանում գլխարկի արկղիկի մէջ։

Հեռախօսի թելերը այդ արկղից անցնում էին գետնի տակով մինչև գերմանական զօրքի բանակած տեղը, և նրանով ուսուցիչը գեղեցիկ կերպով կարող էր յայտնել այն տեղեկութիւնները, որոնց տուեալները ինքը գիտել էր, օգտվելով բացարձակ անձեռնմխելիութիւնից, կամ ստացել էր մեր զօրքի տեղով անցնող անցորդներից։

Պէտք է ասել, որ այդ ուսուցիչը իրան հարկաւոր տեղեկութիւնները դուրս էր քաշում շատ արուեստօրէն. նա իր մօտ էր կանչում մեր զինուորներին, ամեն կերպ պատում էր նրանց և զրոյցի ժամանակ հետզհետէ դուրս էր քաշում այն, ինչ որ հարկաւոր էր իրան։

Երբ ուսուցչի հեռախօսային «կայարանը» գտնվեց, մենք նրանով գերմանացիներին սուտ տեղեկութիւններ տուինք մեր զօրքի դիրքի մասին, և այնուհետև կտրատեցինք թելերը։

Ուսուցիչը, որպէս լրտես, իր հատուցումը ստացաւ պատերազմի ժամանակի օրէնքով համաձայն։

Անկասկած է, որ այդպիսի «ուսուցիչներ» Արևելեան Պրուսիայի մեր գրաւման մասում շատերը կային։ («Բ. Ս.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՎԱՂՈՒՑ ԵՐԷՀԱՐԿԱՒՈՐ

Երբ ողորմելի Թիւրքահայաստանում ապատամբութիւն ծագեց, երբ Աբդիւլ-Համիդի ըէժիմը իբր թէ տապալվեց, երբ հրատարակվեց իբր թէ սահմանադրութիւն, ես մէկն էի այն փոքրաթիւ թերահաւատներից, որոնք աւելի քան կասկածով ընդունեցին աշխարհ ապշեցնող լուրը։ Պարիզի հայկական ժողովներում և մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ, նոյն իսկ երիտասարդ-թիւրքերի ներկայութեամբ, ես շարունակ պնդում էի, թէ դա յեղափոխութիւն չէ իր իսկական նշանակութեամբ, այլ սոսկ մի զինուորական ապատամբութիւն։ Ինձ թւում էր վիրաւորական, երբ այդ ապատամբութիւնը հաւատարեցնում էին ֆրանսիական յեղափոխութեանը, համաշխարհային քաղաքական պատմութեան այդ ամենապայծառ էջին։ Ես այն համոզմունքի էի, նոյնն եմ և այսօր, որ իսկական յեղափոխութեան ընդունակ են միայն այն ազգերը, որ ունեն մտաւոր և հոգեկան գանձ՝ դիտութիւններ, փիլիսոփայութիւն, գրականութիւն, արուեստներ։

Թիւրք ժողովուրդը երբէք չէ ունեցել այդ գանձը, չունի և այժմ, և հազիւ թէ երբևիցէ ունենայ։

Եւ ահա իմ դիւրահաւատ ու դիւրազգաց հայրենակիցներն ուրախութեան գոռում-գոչիւնները, որ երբեմն հասնում էին ցաւալի ծայրայեղութեան, ինձ, իբրև հայի, և՛ վիրաւորում էին և՛ վշտացնում։ Վիրաւորում էին, որովհետև այդ գոռում-գոչիւնների մէջ շատ անգամ խլանում էր ազգային հպարտութեան ձայնը։ Վշտացնում էին, որովհետև ես նախազգուշանում էի իմ հայրենակիցների անխուսափելի հիասթափումը, որ պիտի լինէր այնքան դառը, որքան քաղցր էր հիացումը։

Փաստերը չուշացան իմ կասկածներն ու նախազգուշակումը արդարացնելու։ Սկսվեցին նրանք արտաքուստ շատ փոքր, շատ անշան, բայց ըստ էութեան շատ իմաստալի, շատ խորհրդաւոր և ընորոշ մի երևոյթեամբ։ Դա Ահմէդ-Բիզայի պատմական հմբոյն էր, որ նա դրոշմեց հրապարակօրէն կարմիր սուլթանի արիւնածարաւ և արիւնաշաղախ ձեռքի վրա Եըլդըզ-Քեօշկի պալատում։ Համբոյրն այն մարդու, որ հանդիսան ըէժիմի ամենախոշոր ու ամենակատաղի թշնամին էր եղել և «յեղափոխական» կոչվածների գլխաւոր շէֆերից մէկը։

Թւում էր, որ այդ մի պակ բանը բաւական էր գաղափար կազմելու համար թիւրք կոչվածի արարածի ապականված պսիխիկայի մասին։ Բայց իմ միամիտ հայրենակիցները շարունակում էին յաւիտենակել և սնոտի երազներով սնուցանել իրանց անհեռատեսութիւնը։

Քաջրիկ և անկասելի փաստն հետևեց մեծագոյնը՝ Ադանայի կոտորածը։ Հասկանալի էր. քանի որ «երիտասարդ» թիւրքը համբուրել էր «ծերունի» թիւրքի ձեռքը, ինչու չը պիտի շարունակէր այդ ձեռքի դժոխային գործը։

Այնուհետև զարհուրելի եղելութիւններն, աւելի նախանձելի վիճակի արժանի արագութեամբ, իրար յաջորդելով՝ վերջապէս ամենքին համոզեցին, նոյնիսկ կիսախուլ տկանջներին և կիսալոյս աչքերին, թէ չը կայ ոչ «երիտասարդ» Թիւրքիա և ոչ ծեր Թիւրքիա, չը կան ոչ բռնակալներ և ոչ բռնութեան թշնամիներ, այլ կայ քաղաքակրթութեան, արդարութեան, մարդկային սուրբ իրաւունքների, լոյսի և լուսաւորութեան անհաշտ թշնամի մի զանգուած, որ ճակատագրի զարմանալի հեղնութեամբ հարմարվում է ազգ, թիւրք ազգ։ Մի քիմիական զարելի բաղադրութիւն, որ դարեր շարունակ թունաւորել է մարդկութեան օրգանիզմը։

Թանգ, շատ թանգ նստեց հայ ազգին նրա չափազանց լաւատես, չափազանց դիւրահաւատ զաւակների վեց տարվայ մոլորութիւնը։ Մի մոլորութիւն, որ ապագա պատմագիրը յամենայն դէպս առանց դառնութեան չի ների նրանց։ Բայց և այնպէս ուրախալի է, որ այսօր հազիւ թէ գտնվի մի գիտակից հայ, որ հաւատայ, թէ հայ ժողովուրդը կարող է թիւրք ժողովրդի հետ հաշտութեամբ կրել որևէ քաղաքական լուծ, լինի այդ լուծը բռնապետական, սահմանադրական թէ նոյն իսկ ռամկավարական։ Ուրախալի է մանաւանդ այն, որ «երիտասարդ» թիւրքերի երեկվայ հայ դաշնակիցները այսօր սթափվել են վերջապէս, և երես դարձրել նրանցից ու աշխատում են գործել հակառակ նրանց ուղղութեան։

Հայ ժողովրդի մոլորեալ զաւակները բերել են այն ուղին, որ վաղուց պէտք է բռնած լինէին։ Մեզ մնում է գովել նրանց նոր քայլը և մեր կարողութեան չափ խրախուսել նրանց նոր գործը։ Վախենալ երիտասարդ-թիւրքերի վրիժառութիւնից՝ կնշանակէ լինել փոքրոգի և գործել մի նոր սխալ։ Նրանց անքաղ թշնամութիւնը չէ կարող հայ ժողովրդին այնքան վնասել, որքան վնասեց նրանց քաղաքաւոր բարեկամութիւնը, որովհետև չը պէտք է մարգարէ լինել գուշակելու համար, որ թիւրքիա կոչված պետութիւնը իր մահվան նախօրեակին է ապրում։ Շիրվանզադէ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ գոյութիւն ունի մի ազգ, այդ ազգի հետ շաղկապված գոյութիւն պէտք է ունենան ընդհանուր ցանկութիւններ, յոյսեր, վտանգներ, ահ ու երկիւղ, ցաւ ու հոգսեր, անակնկալ դէպքեր ու փոփոխութիւններ, ուրախութիւն և խորհրդածութիւններն որոշելիք միջոցները, ձեռնարկութիւնները, ուղիներն ևս պէտք է պատկանեն ամբողջ, ընդհանուր, մի վայրում ապրող ազգին, նրա ընտրեալ ներկայացուցիչներին։

Այլ կերպ նրանք, որ հանդէս կը դան այդ ազգի մի մասի, հատուածի կողմից, լինի նա դեմոկրատիայի թէ բուրժուազիայի հոգևորականութեան թէ աշխատաւորականների անունից՝ դա չի ճանաչվի և չի կոչվի ընդհանուր ազգային։

Կարծեօք, խնդիրը շատ պարզ է։

Այդպէս են մտածում և այդպէս էլ պէտք է մտածեն ոչ միայն «Բակу» և «Մշակ» օրգանները, այլ և բոլոր՝ տակտից ոչ զուրկ մտաւորականները և հասարակական մարդիկ առաջնորդները։

Այդպէս են վարվում այսօր ոչ միայն Մեծն Ռուսիայի մեր պահպանողականները, հոկտեմբերականները, կադետները ու էսդէկները, այլև Մեծն Բրիտանիայի երեկվայ կապիտուլ սուֆրաժիստուհիները։

Մեծ վտանգի դիմաց բոլորը հանդէս են գալիս միացած ոյժով, իբրև մի մարմին, որպէս մի զանգուած, ազգովին։

Եւ ազգերն ևս ամեն մի պատերազմի մէջ, այսօր մի ցանկութեամբ միացած, մի կամքով և նպատակով են առաջնորդվում ու ղեկավարվում։

Ազգերի շարքում նոյն համապատասխան

ընդհանուր պարտաւորութիւնների գիտակցութեամբ, նոյն համահայրենական բարձր շահերի անձնուիրութեամբ տոգորված և համակված է այսօր և հայ ազգը՝ իր ընդհանուր հայրենիք Մեծն Ռուսաստանում։

Եւ որովհետև ի շարս այդ ընդհանուր բարոյական պարտաւորութիւնների վաղը կարող են հանդէս գալ և բացառիկ հանգամանքներ ու բարդութիւններ, ուր կը պահանջվեն նոյնպէս բարդ պարտաւորութիւններ, նոր միջոցների և դիմումների անհրաժեշտութիւններ, որոնցից հրաժարվելը գարշանքի արժանի ստոր ամարդութիւն և ուրացութիւն կը կոչվի, ուստի և աններելի տհասութիւն պիտի համարվի առնուազն, եթէ հայը այսօրվանից ընդհանուր խորհրդակցական մարմնի, լայն միջոցների, խոհեմ ձեռնարկութիւնների և լմնելիք զգուշաւոր դիմումների վերաբերեալ անուշադիր մնայ։

Ահա այժմէական այս ստիպողականութեան և երկայրի վտանգաւոր դիրքի առջև է զգացվում «հայկական համազգային ժողովի կարեւորութիւնը»։

Մեր հարևանի կարճատեսութիւնը և թշնամական գործողութիւնը չէ որ մի մազից է կախված։

Միութեամբ զօրված ու պատրաստ դարձվելու ցանկութեան մէջ է կայանում «Баку» և «Մշակ» օրգանների շատ հաճանալի կոչը։

Այդ նկատումով է, որ Շիրվանզադէն նախապատում է տեղական հայերի ձեռնարկութիւններին «հայկական» անունը տալ։

Միութեան այդ օրից կը սկսվի և Լէօի ցանկալի «մեծ գործը», այն էլ չնչին գործը, որը անհնարին կը լինի տանել առանց ընդհանուր ազգի ընտրեալների և որը երբէք չի շահագործի հայութեան անունը, քանի որ նա կը գտնվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանաւորութեան ներքոյ։

Իսրայէլ Խօջամիր

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանքը Շուսում

Շուշի, 10 սեպտեմբերի

Տեղիս խանութպանները, առիթ քաղելով ժամանակից, պատուհաս են դարձել մեր հասարակութեան գլխին և իրանց ոստայնը ձգելով՝ անգթաբար ծծում են բնակչութեան նիւթականը։

Ինչ որ սկսվել է պատերազմը, քաղաքումս մթերքների օրից օր թանգանում են. և եթէ այսպէս շարունակվի, գներն այնքան բարձրանալու են, որ ժողովուրդը, մանաւանդ աղքատ դասակարգը, անկարող կը լինի իր գոյութիւնը պահպանել։

Թէև նահանգապետի կողմից պարտադիր սակագին է նշանակված, բայց ոչ մի խանութպան դրան կարևորութիւն չէ տալիս և իր սահմանած սակագնով է ծախում ապրանքները։ Նա, օգտվելով ժամանակաւոր առանձնայատուկ պայմաններից, աշխատում է օրքան կարելի է թանգ գնով ծախել իր ապրանքը, որպէս զի ըստ հնարաւորութեան լաւ շահագործէ բնակիչների գրպանները։ Տեղական ժողովուրդն էլ կատարելապէս համապատասխանում է այդ հարստահարիչների վարմունքին և գլուխը կախ, առանց տրտունջի վճարում է իրանից պահանջված գինը։ Բողոքել ոստիկանութեանը՝ Շուշու քաղաքացու համար աւանդական սովորութիւնից դուրս է, ուստի և թոյլ է տալիս նրան իրան անողորմաբար կեղեքել։ Այս քայլը շուշեցու համար դատապարտելի է, որովհետև նրա այդ աններելի վարմունքի շնորհիւ մթերքների գները հրէշային չափերի են հասնելու։

Ամբողջ մէկ ամիս անձրևներ տեղալուց յետոյ, քաղաքումս սկսվել են պարզ եղանակներ։ Շրջակայ գիւղերումն էլ, որտեղ անձրևների տեղալու պատճառով կալերում աշխատանքները դադարեցրել էին՝ այժմ շարունակվում են, բայց հասկերը կալերում արդէն ծլել են թացութիւնից և հետևաբար նրանցից ստացված արդիւնքն անհամեմատ աւելի պակաս է առաջվանից։

Վարանդայի գիւղերումն այս տարի հացահատիկների բերքը ստոր է բաւարարից։ Գառուղների բերքն էլ քաղաքիս մօտիկ գիւղերում վատ է, իսկ հեռաւոր գիւղերում լաւ է. շատ է տանձը։ Թթենիներն էլ կարկուտից վնասվելով ոչ մի արդիւնք չեն տուել։

Ստ. Շերմազան

Նորութիւններ Սղնախից

Սղնախ, 18 սեպտեմբերի

Սեպտեմբերի 1-ին պէտք է կայանային քաղաքագլխի և նրա օգնականի ընտրութիւնները, սակայն հայ ձայնաւորները բացակայ էին, ուստի ընտրութիւնները յետաձգվեցին սեպտեմբերի 15-ի օրը։ Հայ իրաւասները քաղաքագլխի պաշտօնի համար վերջնականապէս կանգ են առել Նիկողայոս Ամիրխանեանի վրա։ Օգնական ուզում են ընտրել ներկայ քաղաքագլխի պաշտօնակատար Ն. Տէր-Մատթէոսեանին։

Վերջապէս Սղնախն արժանացաւ ունենալ գր.-ընթերցարան։ Կ. Հ. Բ. Ը. Սղնախի ճիւղի վարչութեան նախագահ Յար. քահ. Տէր-Նիկողոսեանի նախաձեռնութեամբ վարչութիւնը խնդիր է ուղարկել նահանգապետին Սղնախում ճիւղի անունով գր.-ընթերցարան ունենալու մասին։ Թոյլտուութիւնը շուտով կը ստացվի։ Առ այժմ նախագահ Յ. Տէր-Նիկողոսեանը գրադարանի համար յատկացրել է մէկ սենեակ՝ ճիւղի կար ու ձևի դպրոցի կողքին։ Ստացվում են «Մշակ», «Баку», «Тифлисскій Листокъ» և այլն։

Նոյն Յ. Ք. Տէր-Նիկողոսեանի յորդորմամբ Շեշտահը նուիրեց հայոց դպրոցի շինութեան համար 100 ր.։ Երկու տարի առաջ նոյն քահանան գնաց Բագու և հաւաքեց այնտեղ մօտ 700 ր., որով և ապատվից հայոց դպրոցը կրիզիսից։ Առհասարակ Ցարութիւն Ք. Տէր-Նիկողոսեանի 15-ամեայ քահանայական գործունէութիւնը եղել է շինարար և բեղմնաւոր՝ յօգուտ դպրոցի, եկեղեցու և հասարակութեան։ N. N.

Մաղրաճ

Մայիսի, 16 սեպտեմբերի

Ամսիս 14-ին, Խաչվերացի օրը, քաղաքիս ս. Ստեփաննոս եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցվեց։ Պատարագից յետոյ պատարագիչը կարդաց Վեհափառի կօնդակը, ապա քարոզ խօսեց բացատրելով կօնդակի իմաստը։ Ի վերջոյ կատարվեց մաղթանք Թագաւոր Կայսրի ու Կայսերական Տան արեշատութեան, ինչպէս և հոգեհանդիստ՝ պատերազմի դաշտում ընկած զօրքերի համար։

Քաղաքիս հայ հասարակութիւնը ևս անման չը մնաց ժամանակի ընդհանուր ոգևորութիւնից. նա մի տարով բացում է քաղաքումս հիւանդանոց 20 մահճակալով՝ վիրաւոր զօրքերի համար։

Հիւանդանոցի բացման նախաձեռնողներն են պ. պ. Սերովբէ Գանժումեանը և Բաղդասար Մելքումեան։ Առ. Մակ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Սեպտ. 22-ին, «դրօշակների օրը», երեկ. ժամը 6-ին, տեղական գիմնազիաների տեսուչների և ուսուցիչների գլխաւորութեամբ աշակերտական երաժշտախմբերը դիմեցին փոխարքայի պալատի կողմը և սրա առջև կանգնելով նուագեցին ռուսական և Ռուսաստանին դաշնակից բոլոր պետութիւնների ազգային հիմները։ Փոխարքան և փոխարքայի ամուսինը, դուրս գալով պատշգամբ շնորհակալութիւն յայտնեցին։ Աշակերտութիւնը և հաւաքված բազմաթիւ ժողովուրդը բարձրագոչ «ուրաներով» դիմաւորեցին փոխարքային և նրա ամուսնուն։ Նոյն ցոյցը կատարվեց և փոխարքայի օգնական Միշաեվսկիի բնակարանի առջև։

✦ Վիրաւոր զինուորներին օգնութիւն ցոյց տուող քաղ. դումայի յանձնաժողովը որոշել է վիրաւորների համար գրադարան հաստատել, որի համար և գրքերի և թերթերի նուիրաբերութեան գործ է կազմակերպվում։ Այդ նպատակի համար փողոցներում առանձին ակղներ են դրվելու, որոնց մէջ նուիրատուները պէտք է ձգեն իրանց նուիրած գրքերը։ Դրա համար Ռուսական Կայս. Գիւղատնտեսական Ընկ. բազմաթիւ գրքեր է խոստացել։ Յիշեալ յանձնաժողովը որոշել է դիմել բոլոր խմբագրութիւններին, խնդրելով գրադարանի համար զիջել իրանց հրատարակութիւններից ձրիաբար։ Դրա հետ միասին որոշված է վիրաւորների համար գլանակներ (պապիրոս) հաւաքելու գործը կազմակերպել։

✦ Վիրաւորներին օգնող յանձնաժողովը որոշել է խնդրել քաղ. կենտրոնական կոմիտէին Թիֆլիսում էլ, Մոսկվայի օրինակով, «սպիտակեղէնի շաբաթ» կազմել։

✦ Կ. Հ. Բ. Ընկ. հրաւիրել է լիազօրի պաշտօնով Թադէոս Խզմալեանին, որ վերջին տարիները, Երևանի թեմում կատարում էր թեմական տեսչի պաշտօն։ Լիազօրին յանձնարարվում է ընդհանուր հսկողութիւն ճիւղերի վրա և վերահասութիւն Ընկերութիւնից նպաստ ստացող դպրոցների վերաբերմամբ։ Խորհուրդը յանձնել է Խզմալեանին առաջիկայ հոկտեմբերից շրջել այն վայրերը, ուր կան Ընկերութեան ճիւղեր և դպրոցներ։ Մեր կողմից պէտք է աւելացնենք, որ ընտրութիւնն անաջող է։ Եթէ Խզմալեան օգտակար անձն էր, պէտք էր թողնել նրան Երևանի թեմական տեսչի պաշտօնում. այդ մի կողմից. միւս կողմից Կ. Հ. Բարեգ. Ընկեր. առհասարակ պէտք է զգուշանայ այդպիսի պատասխանատու պաշտօնների մէջ ընդունել այնպիսի անձանց, որոնց գործելակերպը մինչև այսօր թայֆայական է եղել։ Բարեգ. Ընկերութեան հաշուով պահվող դպրոցները պէտք է հեռու պահել թայֆայական գործիչների ոտնձգութիւններից։

✦ Երէկ վերջացան Թիֆլիսի այգեգործական դպրոցն աւարտող աշակերտների քննութիւնները։ Աւարտել են 10 հոգի։ Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն հոկտեմբերի 15-ին։ Ազատ տեղ կայ 15 աշակերտի համար։

✦ Վրաց Պողպատագործական Ընկերութիւնը որոշել է Թիֆլիսում երկու տեղ մրզեղէնի խանութ բանալ պահեստներով։ Տեղեկութիւնների համաձայն, մրգի բերքը Գօրու գաւառում բաւարար է։

✦ Արհեստաւորների աւագը մի առանձին կոչով դիմել է արհեստաւորներին, առաջարկելով Թիֆլիսում բանալ երեկոյեան դասընթացքներ արհեստաւորների և նրանց օգնականների համար՝ աւանդելու այն առարկաները, որոնք հարկաւոր են նրանց։

✦ Հինգշաբթի, սեպտեմբերի 25-ին, երեկոյեան ժամը 8-ին կայանալու է մէշչանների լիազօրների ժողովը մի շարք հարցեր քննելու համար։

✦ Թիֆլիսի Արտիստական Ընկերութիւնը շաբաթ, սեպտեմբ. 20-ին, տեղափոխվեց իր ձմերային շէնքը։

✦ Հալաբարի ակումբը հոկտ. 10-ին տեղափոխվում է իր ձմերային շէնքը։

✦ Երկուշաբթի վերսկսեց հրատարակվել «Խաթաբալա» երգիծաբանական թերթը։

ՆՈՎՆԱՍ

✦ Ժողովրդական ներկայացումներ կազմակերպող դերասանական խումբը ղեկավարութեամբ Յ. Ոսկանեանի կը սկսի իր ներկայացումները Բագուում, եղբ. Նիկիտինների թատրոնում կիրակի, սեպտեմբերի 29-ին։ Սեզոնը կը բացվի Շիրվանզադէի «Զար ոգիով»։ Զուտ արդիւնքից 50% կը յատկացվի յօգուտ կամաւորների ընտանիքներին։ Խումբը պիտի խաղայ զուտ ինքնուրոյն պիէսներ և գործելու է Բագու, Բալախանի, Սև-Քաղաք և Բիբի-Էյբաթ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԼԷՕՆԻԴ ԱՆԴՐԷԵՎԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ

Լէօնիդ Անդրէեվը հէնց նոր վերջացրել է մի նոր պիէս, որի նիւթը վերցված է բէլգիական պատերազմի անցքերից։ Պիէսը կրվում է «Թագաւոր, օրէնք և ազատութիւն» վերնագիրը։ Պիէսը լի է ժամանակի արձագանքներով։ Պիէսում գործում է բէլգիական նշանաւոր գրող Էմիլ Գրիլէ, որ պատերազմ է գնում. գործում է մի մինիստր, որ ժամանակաւորապէս ընտրվել է ժողովրդի կողմից. վերջապէս գործում է կոմս Կլերմոն, երիտասարդ օֆիցէր, որի առջև գլուխ են խոնարհում և մինիստրը և ծերունի գեներալը։

Պիէսում դուրս են բերված և գերմանական շտաբի ներկայացուցիչները, զօրաբանակի «երկաթեայ» հրամանատարի գլխաւորութեամբ։

Գործողութիւնը կատարվում է պատերազմի արիւնալի ֆօնի վրա, բռնորագոյն հրդեհների մէջ և Բարբանսօնի հնչիւնների տակ։

Պիէսի ընթերցանութիւնը, ինչպէս ասում է «День» թերթի աշխատակիցը, խորը տպաւորութիւն է թողնում, որը աւելի ոյժ կը ստանայ բեմի վրա։

Պիէսը լավում է մեծ հետաքրքրութեամբ և խոր յուզմամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕՄՐՈՒԼԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւող մեծ դրամայի առաջ ներկայումս նստում են բոլոր հասարակական, սոցիալ-քաղաքական հարցերը, անուշադրութեան են մատնվում յաճախ խոշոր քաղաքական նշանակութիւն ունեցող երևոյթներ։

Այսպէս, աննկատելի անցաւ հեռագրական հաղորդութիւնը այն մասին, որ Իրլանդիայի հօմրուլի բիլը հաստատված է անգլիական թագաւորի կողմից։

Մինչ տասնեակ տարիների ընթացքում ամբողջ քաղաքակիրթ աշխարհը խորին ուշադրութեամբ հետևում էր այն երկարատև, լարված պայքարին, որ կրում էր իրլանդական ժողովուրդը իր անկախութեան, Իրլանդիայի ինքնավարութեան համար։ Ամենքի յիշողութեան մէջ վառ է դեռ նրա նշանաւոր ներկայացուցչի՝ Պարնելլի գեղեցիկ, գաղափարական գործունէութիւնը, նրա քաղաքական կեանքի խոշոր, ուշագրաւ մոմենտները։ Ամենքի յիշողութեան մէջ վառ է դեռ այն ժամանակաշրջանը, երբ անգլիական լիբերալիզմը ի դէմս իր փայլուն ներկայացուցչի՝ Գլադստոնի, ընդառաջ եկաւ իրլանդական իղձերին, երբ 1886 թ. առաջին անգամ Գլադստոնը մտցրեց անգլիական պարլամենտը Իրլանդիայի ինքնավարութեան օրինագիծը՝ հօմրուլի բիլը։ Բիլը տապալվեց հէնց համայնքների պալատում։

Այնուհետև տարիների ընթացքում Իրլանդիայի ինքնավարութեան հարցը շարունակ զբաղեցրել է Անգլիայի հասարակական կարծիքը, գրաւել է լիբերալ կուսակցութիւնների համակրանքը, ընդունվել է համայնքների պալատում, բայց շարունակ տապալվել է լորդերի պալատում։

Այդ երկարատև պայքարի վերջին շրջանը նորից սուր կերպարանք է ընդունում։ Իրլանդական կուսակցութիւնը իր պարագլուխ Ռէդմոնդի ղեկավարութեամբ լարում է իր վերջին ոյժերը, ճակատագրական կռիւ է մղում հօմրուլի բիլը ընդունելի դարձնելու համար։ Ասկվիթի լիբերալ կաբինէտը, աջակից ունենալով ներքին պալատի առաջադէմ մասը, 3 տարի շարունակ մի-մեանց վրա մտցնում է հօմրուլի բիլը համայնքների պալատը. վերջինը ամեն անգամ ընդունում է բիլը, իսկ վերին պալատը ամեն անգամ՝ մերժում։

Եւ զուցէ երբէք Իրլանդիայի ինքնավարութեան օրինագիծը օրէնք չը դառնար, եթէ չը խորտակվէր այն հիմաւորից պատնէշը, որ տապալում էր բոլոր առաջադէմ, դեմոկրատական բեֆորմները՝ եթէ չը վերացվէր լորդերի պալատի veto-ի իրաւունքը։

Ինչպէս յայտնի է, 1911 թ. պարլամենտական ակտի համաձայն ամեն մի օրինագիծ, որ ընդունվում է համայնքների պալատի՝ 3 միմեանց յաջորդող պարլամենտական սեսիաներում, հաստատվում է թագաւորից, օրէնք է դառնում, չը հայած որ 3 անգամն էլ մերժվում է լորդերի պալատից։

Հօմրուլի բիլը առաջին օրինագիծն է, որ օրէնք է դառնում առանց վերին պալատի ժառանգական օրէնսդիրների հաւանութեան։

Թէև հօմրուլի բիլի հաստատման հետ միաժամանակ համայնքների պալատը ընդունում է և մի ուրիշ օրինագիծ, որով Իրլանդիայի ինքնավարութեան օրէնքը ի կատար կածվի միայն պատերազմը վերջանալուց յետոյ, բայց ի նկատի պէտք է ունենալ, որ օրէնքի իրագործման յետաձգվելը ներկայումս ունի իր լուրջ պատճառները. ինչպէս յայտնի է ընթերցողին, հօմրուլի հարցը մեծ խռովութիւններ առաջ բերեց Անգլիայի քաղաքական կեանքում. հօմրուլի հակառակորդները քաղաքացիական պատերազմ էին սպառնում Ուլստերում. կազմակերպվել էր մի յեղափոխական բանակ ունիոնիստների պարագլուխ Կարսոնի ղեկավարութեամբ, որը պէտք է զէնքով դիմադրէր օրէնքի իրագործմանը Ուլստերում. նոյն իսկ անգլիական զօրքի մէջ էլ խռովութիւններ ծագեցին. և միայն արտաքին պատերազմի առաջ խաղաղվեցին յուզված մտքերը, հարցը կորցրեց իր սուր կերպարանքը, մոռացվեցին ներքին պառակտումները. երկրի բոլոր ոյժերը միացան արտաքին թշնամու հանդէպ։ Ահա ինչու այդ հանգամանքներում օրէնքի գործադրումը ներկայումս անխոհեմութիւն կը լինէր։ Ընդունելով հօմրուլի գործադրման յետաձգվելը, Ասկվիթը մտադիր է առաջիկայ պարլամենտական սեսիային հօմրուլի ուղղումն մտցնել Ուլստերի վերաբերեալ։

Այսպէս ուրեմն, պատերազմը վերջանալուց յետոյ, Իրլանդիան կունենայ Դուբլինում իր անկախ պարլամենտը և պատասխանատու մինիստրութիւնը։

Տասնեակ տարիների պայքարը վերջացաւ յաղթութեամբ. ստեղծվում է ինքնավար Իրլանդիա։

Իրաւունքի և արդարութեան մի նոր յաղթանակ։ Սոֆիա Դանիէլ-բէկ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Զօրանցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ոյային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Բ. ՇԱԲԱՆԱՆԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ2—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկաբ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Ե. Ե. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ե. Ե. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Հաւաքները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—84

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
(ՀԱՅ ԳՐՈՂԸ)

Վերադարձած լինելով Թիւրքիայից, կամենում է պաշտօն ունենալ հայ դպրոցներում կամ իբրև ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ և կամ իբրև ԴԱՍԱՏՈՒ հետևեալ առարկաների.—Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, Հայոց գրականութեան պատմութիւն և Ընդհանուր պատմութիւն։ Պաշտօնավարելու համար օրէնք արգելք չունի։

Դիմել նամակով և հաղորդել պայմանները հետևեալ հասցէին։—Нахичевань н./Дону (Донск. обл.) 20-ая Линія, д. № 30. В. Папазьяну. (չ. կ.) 875. 8—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻՐ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԻՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամ 5 գ. Ա.. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի»յօբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանակ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

Հայրապետական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
(ա.օ) Նիկոլայէվսկայա փող. 36. 863. 25—12

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ԹԻՖԼԻՍ, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն ատտեստաստներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լէօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէլ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուպահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկան, բանկային և գործընկերական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնդրութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Ձայնագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Մղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր.) և 4) Առնտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւն շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Դասերը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առեւտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 720. 0—37

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՐՏԱՕԵՍ ԱՐԵՂԵԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Դասագիրքը

Բաղկացած հետևեալ մասերից. 1) Ընդհանուր նկարագրութիւն (ընական մաս). 2) Ռուսահայաստան. 3) Տաճկահայաստան (Հայկական վեց վիլայէթներ). 4) Պարսկահայաստան. 5) Գիլիկիա. 6) Հին Հայաստան (քաղաք. բաժանումն.)։ Դասագրքի նիւթը և ծաւալը յարմարեցված են դպրոցական ծրագրին։

Դասագրքին կցված են Կովկասի, Տաճկահայաստանի, Հին-Հայաստանի, Գիլիկիայի և այլ քարտէզներ։ Կովկասի և Տաճկահայաստանի քարտէզները գունագեղ են, իւրաքանչիւրը երկու էջի մեծութեամբ։ Դասագրքում կան նաև բազմաթիւ պատկերներ (մօտ հարիւր). ներկայ աշխատութեան տպագրութեան համար կազմողի արամադրութեան տակ են դրված եղել Լինչի «Հայաստան» աշխատութեան տեքստի՝ Լէօնդօնում պատրաստած կլիշէները։

Դասագրքի գինն է, քարտէզներով միասին, 80 կ., զուտմարով գնողների համար՝ 60 կ.։ Կովկասի և Տաճկահայաստանի քարտէզներից իւրաքանչիւրն առանձին վաճառքի մէջ արժէ 12 կ.։

Վաճառվում են նաև նոյն կազմողի Աշխարհագրութեան դասագրքերի միւս մասերը (քարտէզներով և պատկերներով). Ա. մաս—60 կ., Բ. մաս—65 կ., Գ. մաս—70 կ.։

Դիմել՝ Թիֆլիս, «ԳԻՒՐ» և միւս գրախանութներին, կամ կազմողին՝ Ներսիսեան գրոց։
(չ. հ.) 868. 5—4

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այլու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՔՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный